

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք.

Հ. Ս. Խ. Հ. ՔԱՂԱՔ. ԼՈՒՍԱՎ. ԳԼԽԱՎՈ՛՛՛՛՛՛՛ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ԳԱՎՔԱՂԼՈՒՍՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

(7—13 ՄԱՐՏԻ 1923 Թ.)



**ՅԵՐԵՎԱՆ**

**ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ № 64  
1923**



1/2 91  
1917

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐԱԿԱՐԳԸ, ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՌԵԳԼԱՄԵՆՏԸ,  
ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԻՍՆԵՐԸ

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐԱԿԱՐԳԸ

1. Լուսժողովի խոսքը—ընկ. Մուսվյան.
2. Ֆեդերացիայի ներքին և միջազգային դրությունը—ընկ. Լուկաշին.
3. Քաղլուսաշխատանքը և կոիվ մանր բուրժուական իդեոգիայի դեմ—ընկ. Շահումյան.
4. Գլխավորության գործունեությունը և մոտակա խնդիրները—ընկ. Դզնունի.
5. Արտադրության ագիտացիա և պրոպագանդա—ընկ. Իշխանյան.
6. Դպրոցա-դասընթացային ագիտացիա և պրոպագանդա—ընկ. Խեչումյան.
7. Ծրագրա-գրախոսական աշխատանք—ընկ. Քաղապարտ.
8. Քաղլուսաշխատանքը Յերիտկոմիտիային շարքերում—ընկ. Մանուկյան.
9. Քաղլուսաշխատանքը Պրոֆմիտիային շարքերում—ընկ. Հ. Գասպարյան.
10. Քաղլուսաշխատանքը միլիցիայի շարքերում—ընկ. Ալեքսանյան.

ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՌԵԳԼԱՄԵՆՏԸ

1. Նիստերը տեղի յեն ունենում առ. 11—3 ժ. և յերեկ. 5—8 ժ.
2. Զեկուցանողին տրվում է 1½ ժ., վերջին խոսքի համար՝ 1½ ժ.
3. Վիճաբանությունների համար խոսք և տրվում 20 և 10 րոպե.
4. Հարցերը վերջանում են ձայների մեծամասնությամբ:

Տրեսի առաջին հարցում



## ՔԱՂԼՈՒՍՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՈՏԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՁԵԿՈՒՑՈՒՄ ԸՆԿ. ԴՋՆՈՒՆՈՒ

Անցել է 2 տարի այն որվանից, յերբ Լուսժողովմասի արտադրողական բաժինը վերակազմվեց և իրեն սնամիջական նպատակ դրեց քաղաքական լուսավորության գործը հանրապետության սահմաններում: Այսպիսով կազմվեց Գլխաղլուսավարը, վոր դառնալով կուսակցության գործող արտադրատը անկուսակցական դյուղացիության և բանվորության շարքերում պիտի խորացնեի և առաջ տաներ կոմունիզմի պետական պրոպագանդան:

Յեվ 2 տարվա փորձառությունից հետո այսոր առաջին անգամն է, վոր հրավիրվում է գալքաղլուսավարների և հանրապետության քաղլուսահիմնարկների ու կազմակերպությունների համագումարը: Այս հանգամանքը դժվարացնում է Գլխաղլուսավարի անցյալ գործունեության ընդհանուր տեսությունը և աշխատանքի նոր ուղիների ընդգծումը: Ամենախոշոր արգելափակ հանգամանք պիտի համարել Գլխաղլուսավարի նախագահների հաճախակի փոփոխությունը և աշխատանքների հաջորդականության բացակայությունը: Ուստի և յես կը կարողանամ առաջ անցյալ գործունեության միայն ընդհանուր պատկերը, մանրամասներեն կանգ առնելով այն շրջանի վրա, վոր սկսվում է անցյալ տարվա ոգոստոս ամսից, յերբ յես անցա Գլխաղլուսավարի աշխատանքի ղեկավարման գործին:

Գլխաղլուսավարը կազմակերպվել է 1921 թ. ամրանը: Չունենալով վորոշ անցյալ, համապատասխան պրակտիկայի և քաղաքական լուսավորության աշխատանքի այս ճյուղին հմուտ աշխատողներ՝ Գլխաղլուսավարը յուր գաղափարով և աշխատանքի ձևերով անձանոթ է խորթ է մնացել թե մեր քաղլուսավարիչների և թե կուսակցական աշխատողների խոշոր մասի համար: Արտաքուստ ամեն ինչ տեղին է յեղել՝ Գլխաղլուսավարը ունեցել է



11-243979r



բոլոր այն բաժիններն ու յենթաբաժիններն ինչ վոր Ռուսաստանի Գլխաղլուավարը тео, чзо, музо, худо, агитотд, пропота, кндо և այլն—այս բոլորը գոյութուն եյին ունեցել կետրոնի ապարարտի մեջ: Սակայն տեղերում Գավաղլուավարներ կամ բոլորովին չեն յեղել, կամ յեթե յեղել են, անծանոթ են յեղել իրենց ֆունկցիաներին. 100-ի հասնող խրճիթ-ընթերցարանները լավագույն դեպքում գյուղկումբշի համար ժողովատեղի եյին և ուրիշ վոչինչ: Ռուսաստանից ստացվող մեծաքանակ գրականութունը կամ մնում էր գրքերի կոլեկտորում կամ անապատակ պահում վորեն խուլ գյուղում: Վորոշ չափով կանոնավոր հիմքերի վրա յեր դրվում միայն անգրագիտության վերացման գործը, վորը մինչև տնտեսական նոր քաղաքականության շրջանն ունեւ որչեկտիվ բոլոր պայմանները յուր զարգացման համար: Գեղարվեստական աշխատանքի ասպարիզում Գլխաղլուավարը ուներ շարժական բեմ և խումբ, արևելյան յերաժշտախումբ և յերգեցիկ խումբ, վորոնց գոյությանը սակայն վերջ է տրվում դեռ ևս 22 թ. ապրիլին շտատներին և նախահաշվի կրճատման փամանակ:

Կանոնավոր հաշվառւ անցած գործունեության մասին, այլ և քաղլուսնիմարկների պարզ ցանց համապատասխան նախահաշվով չի յեղել Գլխաղլուավարում, այլ այդ բոլորը ծագում և զարգանում էր անսխտեմ, անկազմակերպ, մի տեսակ տարերային հոսանքին յենթակա՝ ավելի փոքր մասշտաբով կրկնելով Ռուսաստանի որինակը:

Ապա գալիս և ՆեՊ-ի ավերիչ ազդեցությունը Գլխաղլուավարի և առհասարակ լուսավորության գործի և ապարարտի վրա, և ունեցելի նման բուսած քաղլուսնիմարկները արագությամբ էլ վերանում են. վոչ մի սխտեմ քաղլուսնիմարկների կրճատման գործում չի յեղել: Կրճատվել է նախ և առաջ կենտրոնական ազգարատը. բոլոր բազմաթիվ յենթաբաժիններից մնում են միայն 2 բաժին՝ կազմակերպչական և ագիտացիոն—ամբողջ շտատը հասնում է 7-ի: Ապրիլից դադարում են գոյութուն ունենալուց մի շարք կենտրոնական հիմնարկներ և նրանց թվում շարժական բեմը, խումբը, արևելյան յերաժշտախումբը և յերգեցիկ խումբը: Բայց ավելի մեծ մասշտաբով այդ քայքայումը տեղի է ունենում տարրական քաղլուսնիմարկների նկատմամբ: Մի գավառ (որ. Յերեանի), ուր կային մի քանի տասնյակ խ.-ընթերցարաններ,

նույնքան էլ դրադարաններ, ակումբներ և այլն, մնում է միանգամայն ամալի՝ զուրկ վորեն քաղլուսնիմարկների ցանցից: Լուսժողկոմատի բյուջեն, շտատների անվերջ կրճատումը, տեղական միջոցների խնդիրը—այս բոլորը վերջին հաշվով հասցնում էյին քաղլուավարների լիկվիդացիային:

Լիկվիդատորական տրամադրություն Գլխաղլուավարի վերաբերմամբ, վոր յեղել է Ռուսաստանում, գոյութուն է ունեցել և մեր իրականության մեջ: Վոչ միայն քաղլուսնիմարկներ, այլ ամբողջ Գավաղլուավարներ վերանում են և արդեն ոգոստոսին, յերբ Կ. Կ.-ի կողմից գործուղվում էմ Գլխաղլուավար աշխատանքի համար, ինձ հանձնարարվում է մի ապարարտ բախկացած 3 հոգուց, իսկ գավառներից միայն 1-ը (Ղարաբլիսա) ունենում է Գավաղլուավարի վարիչ:

Այսպիսի պայմաններում Գլխաղլուավարը ձգտում է նախ և առաջ ազատագրվել տնտեսական քաղաքականության հասցրած հարվածներից և ավերածություններից ու տանել կազմակերպչական աշխատանք նախահաշվի, շտատների և քաղլուսնիմարկների նկատմամբ:

Առաջին խնդիրը, վոր ձառացել էր մեր առաջ, դա քաղլուսնիմարկների տեղական մարմինների և քաղլուսնիմարկների ցանցի և նախահաշվի համապատասխանության հարցն էր:

Պիտի տեսել, վոր նախահաշվի ըստ առանձին վաւթությունների Լուսժողկոմատը չի ունեցել. յեղել է մի ընդհանուր նախահաշիվ, վորի մեջ 22 թվ. Գլխաղլուավարը ունեցել է ամբողջ 185,000 ու., վորից սակայն նրան հաջողվել է ստանալ միայն 10,000 ու., մնացած բոլոր ծախսերը թողնվել են տեղերին: Այս անորոշ դրությունից պետք էր դուրս գալ, և Լուսժողկոմատի կուլեգիայում վերջնականապես վորոշվեց քաղլուսնիմարկների տեղական և կենտրոնի մատակարարման վրա գտնվելու հարցը: Այսպիսով հանրապետության սահմաններում Գլխաղլուավարը պահում էր 40 խրճիթ-ընթերցարան, վոչ մի հատ ակումբ, 10 դրադարան և այս բոլորի միայն շտատներն էր հոգում, իսկ բոլոր այլ ծախսերը ինչպես և մնացած խ.-ընթերցարանները և ակումբները մնում էյին տեղերի հոգացողության տակ: Ինչ խոսք, վոր տեղերը, մեկնելով իրենց բյուջեններից, շատ քիչ եյին ընդառաջում այս կարիքին և քաղաքական լուսավորության գործը



շարունակում եր կադար: Անգրագիտութեան վերացման նկատմամբ ևս կոլլեգիայի վորդմամբ կրճատվում երն բոլոր լիկվիդատորները իբրև շտապի ուսուցիչներ և պիտի վարձատրվեն նույն աշխ. դպրոցի ուսուցիչները իրենց արտաժամյա աշխատանքի համար անգրագիտութեան վերացման գործում: Այսպիսով նորից բացակայում եր հաստատուն շտապ և քաղաքացիական համապատասխան կադր:

Այսպիսով տեսնում ենք, վոր սթափվել ՆեՊ-ի ավերիչ հարվածներից այնքան ել արագ չի կարողանում Գլխավորումարը: Այդ ավերածութեան պատճառները 2-են. նախ և առաջ քաղաքացիական պետական մատակարարումից հանելը և ապա Գալուսթիներին վերաբերմունքը դեպի քաղաքացիներ. մինչև այսօր ել սովորական երևույթ ե այն հանգամանքը, վոր գալուսթում գալուսթաբանի նախահաշվում տեղ չունի և նույնիսկ Գլխավորումարի ուղարկած գումարները չեն ծախսվում քաղաքացիական պետության համար, այլ գնում են գոհացնելու լուսաբանների հոգսերը (որ. Մեղրիի և Դարալագյաղի):

Այս քառասուն դրուժյունից վերջնականապես դուրս գալու համար Գլխավորումարը պիտի նախ և առաջ վորոշեր մի շարք հիմնական խնդիրներ, վոր վերաբերում են Ֆինանսական և մատակարարման հարցերին, ընդունել բավարար քանակով շտապ, պարզ և վորոշ բաժանման յենթակեր կենտրոնի և տեղերի նախահաշիվները, հանդես գար Գլխավորումարի վորոշ նախահաշիվ և պահանջներ նույնպիսին գալուսթումարների համար և ապա ընդունել ապագա ապագա մի այնպիսի ստրուկտուրա, վոր համապատասխանի ներկայիս դպրոցական և արտադպրոցական ագիտացիայի խնդիրներին:

Այս հարցերով ե գրավում Գլխավորումարը 22 թվի վերջին ամիսներին և արդեն 23 թ. հունվարին նա տալիս ե վերահիշյալ բոլոր խնդիրներին համապատասխան լուծում:

Նախ և առաջ Ֆինանսական և մատակարարման խնդիր: Գլխավորումարին սկզբում հաջողվել եր ստանալ լուսժողովում տի նախահաշիվ 220%-ը և վերցնել իր վրա (պետական մատակարարում) 40 խճիթ-քնիթերցարան, 10 գրադարան և անգրագիտութեան վերացման ուսուցիչների աշխատանքների համար արտաժամյա վարձատրություն: Սակայն Լուսժողովումատը, վոր

արդեն մեղանում հռչակվել ե իր անվերջ կրճատումներով, չը թողեց մեղ ևս հանգիստ ու նորանոր կրճատումների դուռ բացվեց մեղ համար: Վերջին կրճատումներից մեկում Գլխավորումարի նախահաշիվը հասցվեց 4,80% լուսժողովումատի ընդհանուր նախահաշիվի և ըստ համառ տեղեկությունների լուսժողովումատի կազմակերպողները այժմ գրաված ե նորանոր կրճատումներով, թե մինչև քանի՞ տոկոս կը հասցվի մեր նախահաշիվը՝ չը գիտեմ. այսքանը միայն պարզ ե, վոր այդ կրճատումների տրամաբանական վերջավորությունը պիտի լինի քաղաքացիական պետության: Արդեն այն, ինչ վոր կա, ստեղծել ե անբնական և ծիծաղելի դրություն, երբ 13 յենթաբաժին և 10 գալուսթի մարմիններ ունեցող ապագա ապագա տրվում ե 1,650 ո. մի քառյակի համար: Ինչ խոսք, վոր աշխատանքի ամբողջական ասպարեզներ մնում են առանց կոպեկի, ինչպես, որինակ, գրադարանային, թատրոնական և այլն, իսկ մյուսների համար նախատեսված ե աննշան գումար. այսպես, կամպանիաների համար 200 ո., այնինչ յուրաքանչյուր կամպանիա կը պահանջի առնվազն 300 ո., իսկ հրատարակութեան գործի համար տրված գումարը հազիվ 1 բրոշյուրի գին կազմի: Բավական ե հիշել, վոր ապագա ապագա (շտապների), անգրագիտութեան վերացման և քաղաքացիականների աշխատակիցների վարձատրութեան ընդհանուր գումարը հասնում ե 20,000-ի, այն ինչ մեր պահանջն ե յեղել 100,000 ո.:

Նման Ֆինանսական դրութեան մեջ Գլխավորումարը չի կարող բավարարել յուր պահանջը միևմուտ չափով. այլևս խոսք չի կարող լինել, իհարկե, այլ քաղաքացիականների, ինչպես Յերիտիմիութեան, բանակի, պրոֆիտութեան և այլն, վոր և նյութական ոժանդակություն տալու մասին: Հուսալ տեղական միջոցների վրա գտնում եմ անիրագործելի պայման. գոնե այն փոքրիկ ծախսը, վոր պիտի անեյին տեղերը, հոգալով անգրագիտութեան վերացման տնտեսական և գրեհական ծախսերը, շատ գալուսթներում չի արված և գործը կանգ ե առել մինչև վոր Գլխավորումարը կարողացել ե իր նախահաշիվից դուրս վորոշ քանակութեամբ գրեհական պիտոյքներ հասցնել տեղերին:

Այս դրութեանը պիտի ավելացնել և մի այլ աննորմալ յենթաբաժին. յերբ Գլխավորումարը հազար զեմպրություններով կարողանում ե հասցնել գալուսթներին չնչին գումարներ, այդպիսի-



ները իրենց անմիջական նպատակին չեն ծախսվում, այլ լուս-  
բաժինը ծախսում է իր այլ պետքերին և ապա նորից ներկա-  
յացնում պահանջաթերթ ուսուցիչների ուժեղներին. այդպիսի ու-  
րինակ ունենք մենք Դարալագյազի և Մեղրիի գավառներում:

Այս հիմնական նյութական կացութունը գնում է մեր առաջ  
նախ և առաջ նախահաշվի և քաղաքականության գանցի համա-  
պատասխանության խնդիրը, սակայն յերբ մենք հանրապետու-  
թյան սահմաններում գտնվող ավելի քան 200 խ.-ընթերցարանից  
միայն 40-ն են հանձն առել պահել պետական մատակարարման  
վրա, իսկ համաձայն մեր ունեցած վերջին թվերի պիտի հա-  
ցնենք 20-ի, ինչ խոսք կարող է լինել վորեն սխառեմատիկ աշ-  
խատանքի մասին այն ել քաղաքական դաստիարակության առ-  
պարիզում: Պարզ է, վոր պալիատիվներով վոչինչ չի կարելի ա-  
նել և պետք է խնդրին տալ ավելի հիմնական լուծում և Գլխադ-  
րուվարը կազմակերպչի և Ֆինանսապես յենթարկել մի այն-  
պիսի մարմնի, վոր կարողանա գտնեմինիմալ չափով բավարարել  
քաղաքացիական հարվածային պահանջները:

Այս հիմնական գրությունից բղխում է և մատակարարման  
խնդիրը: Չունենալով և վոչ մի հնարավորութուն մատակար-  
րելու տեղերին անհրաժեշտ քանակով գրեհական, պրադարանա-  
յին, թատերական և այլ պիտույքներ, Գլխադրուվարը այնու-  
ամենայնիվ կարողացել է 22 թվի նոյեմբերից սկսած մինչև  
այժմս բաժանել հետևյալ քանակությամբ պիտույքներ՝

|                                    |              |
|------------------------------------|--------------|
| 1. Տետրեր                          | 7,840 հատ    |
| 2. Մատիա                           | 1,840 »      |
| 3. Թուղթ                           | 2,298 թերթ   |
| 4. Գրչածայր                        | 578 հատ      |
| 5. Գրչակոթ                         | 440 »        |
| 6. Գրքեր                           | 55,800 հատոր |
| 7. Դասագրքեր («Դեպի լույս» և այլն) | 4,258 »      |
| 8. Կտոր բնի համար                  | 1,850 արշին: |

Այս թվերը, իհարկե, չեն կարող բավարարել մեր կարիք-  
ները մինիմալ չափով և մեր գալուտային աշխատողների դժգո-  
հությունը այս առպարիզում պիտի բացատրել միայն այն ֆի-  
նանսական գրությամբ, վորի մասին յես վերևում արդեն հիշա-  
տակեցի: Ավելին անել յեղած պայմաններում անհնար էր:

Պարզ է, վոր տեղական մարմինների վրա (գործկոմեր)  
կնխում են դեռ ևս նյութական մեծամեծ հոգսեր. այդ տեսա-  
մանից մեր գավառների մեջ Ալեքսանդրապոլն է, վոր ոժանդա-  
կել է մեզ խոշոր չափով, իսկ Դարալագյազ, Մեղրի, Նոր-Բայա-  
զես և Նույնիակ Յեղմիածին Նույնիակ նախահաշիվ չունին քաղ-  
աքական համար: Յերևանի գավառի քաղաքավարը ևս շնորհիվ  
իր մոտիկության նարկոմատներին, Հոկ-ին և այլն, կարողացել  
է ինքնաշխատության միջոցով ձեռք բերել նյութական հնարա-  
վորություններ և գրեհական պիտույքներ և պակասը լրացնել:  
Սակայն դա, իհարկե, յերբեք չի կարելի գավգործկոմի ոժանդա-  
կություն համարել:

Այժմ նորից գառնանք նախահաշվի խնդրին:  
Նախահաշիվը կազմելիս մենք մեկնում էյինք  
հետևյալ դրությունից: Կենտրոնը տալիս է անգրա-  
դիտության վերացման բոլոր ուսուցիչների ուժեղը, իսկ տեղե-  
րը հոգում են տնտեսական և գրեհական պիտույքների ծախսե-  
րը: Սակայն փորձը մեզ ցույց տվեց, վոր այդ ձևով վոչ մի աշ-  
խատանք առաջ չի գնա մինչև վոր կենտրոնը չը վերցնի իր  
վրա գրեհական պիտույքներ քիչ թե շատ բավարար չափով տե-  
ղերին մատակարարելու խնդիրը: Ներկայիս մենք, ըստ նախա-  
հաշվի, ունենք այդ կարիքի համար 750 ու, սակայն քանի վոր  
այդ նախահաշիվը դեռ չէ հաստատված, մենք հնարավորություն  
չունենք և վոչ մի կոպեկ ստանալու այս կարիքի համար: Վեր-  
ջերս Լուսժողովմատից ստացած մի քանի հազար տետրն է, վոր  
կարող ենք բաժանել տեղերին և այսպիսով ոժանդակել նրանց,  
մնացածը պիտի գավքաղաքավարները հոգան:

Այսքանը ֆինանսական և մատակարարման հարցի նկատ-  
մամբ: Յեղրակացությունը մեկ է. տեղերը չեն տալիս գավքաղ-  
աքավարներին անհրաժեշտ ոժանդակություն, կենտրոնը յեղած  
հնարավորություններով չի կարողանում հոգալ տեղերի պետքերը:  
Պետք է տարվի ուժեղ աշխատանք հասցնելու Գլխադրուվարի  
նախահաշիվը Լուսժողովմատի նախահաշվի 3-ին, իսկ յեթե դա  
անհնար է՝ պիտի նյութականապես և կազմակերպչորեն յենթար-  
կել քաղաքավարը այլ կազմակերպության: (Այս մասին վերջում):  
Պիտի ուժեղացնել Նույնպես արտադրական սեկցիան կինո-այդի-



ներից, զբախանութներից և այլն՝ համապատասխան նյութական միջոցներ ստանալու նպատակով:

Յերկրորդ խնդիրը, վոր վոչ պակաս զբաղեցրել է մեզ, դա շտատներն խնդիրն է: Նախ և առաջ կենտրոնի ապագարատը: Յես արդեն ասացի, վոր ոչոստոսին մեր շտատները հասնում ենին միայն 7 հոգու, կար 2 բաժին: Պարզ է, վոր այսպիսի թերի ապարատով հնարավոր չեր վորեն սիստեմատիկ աշխատանք տանել և, վոր գլխավորն է, յեղած ստրուկտուրան չեր համապատասխանում քաղաքավարի առաջ դրված խնդիրներին, անհրաժեշտ եր նոր ստրուկտուրա, վոր կազմված լիներ վորոշ մեթոդի և ներկայիս մեր պահանջների համեմատ: Յեվ արդեն հունվարից Գրլի-քաղաքավարը ունի 4 բաժին 13 յենթաբաժիններով, այն է՝

1. Կազմ-հրահանգչական բաժին՝ ինֆորմացիոն-ստատիստիքական, հրահանգչական և ընդհանուր յենթաբաժիններով, 2. Արտադարձակալան ագիտացիայի և պրոպագանդայի բաժին՝ գրադարանային, ակումբային, թատերական և ագիտացիոն յենթաբաժիններով, 3. Դպրոցա-դասընթացային ագիտացիայի և պրոպագանդայի բաժին՝ անգրագիտության վերացման, հասակավորների գալրոցների (նրանց թվում և կուսակցական դպրոցների) և դասընթացային յենթաբաժիններով և 4. Ծրարա-զբախոսական բաժին՝ ծրագրա-մեթոդական, գրախոսական յենթաբաժիններով և ինքնադարձացման հանձնաժողովով, վորին կից դնվում է Արտաշխի տունը: Անկախ այս բաժիններից գոյություն ունի արտադրական սեկցիան, վորը շտատների մեջ չիմտնում և գոյություն ունի ինքնարդարացման սեկցիոնը: Այսպիսով Գլխավարի շտատները հասնում են 22-ի և կարելի է ասել, վոր բավարարում են մեր կարիքները, թեպետ յերբեմն 2 յենթաբաժինների վարիչների պաշտոնը ստիպված է տանել բաժնի վարիչը, իսկ գրաքննության գործի համար չկա և վոչ մի հատուկ աշխատակից:

Ինչ վերաբերում է գավառային աշխատողներին, մեզ հաջողվել է (թղթի վրա դեռ այժմս) ստանալ Յերևանի, Եջմիածնի, Ալեքսպոլի, Իրիկձանի և Զանգեզուրի համար գավառավարի 3-ան աշխատակից, իսկ մնացած գավառներին 2-ան: Սակայն վերջերս Լուսժողովատուում սկսվել է ինչ վոր նոր կրճատում, վոր յերևի կարտահայտվի նաև մեր ապագարատի վրա: Գալով խրճիթ-ընթերցարանների և ակումբների աշխատակիցներին,

այդպիսիների թիվը հասնում է 60 հոգու, իսկ անգրագիտության վերացման համար 100 ուսուցիչ: Հաշվելով ժամավճարով պարապողներին՝ կստանանք 200: Մի կողմ եմ թողնում այն հանգամանքը, վոր այս բոլորը միայն թղթի վրա յե, պիտի ասել, վոր յերբեք բավարար չե, քանի վոր ի դիմաց հիշված թվերի մենք ունենք կրկնակի և յևուակի քանակությամբ քաղաքի միջնակներ:

Պարզ է, վոր շտատների նկատմամբ մեզանում տիրում է նույն անմխիթար և քառասային վիճակը, ինչ և նախահաշվի հարցումն է:

Այսպիսով Գլխավարի կարողացավ 23 թ. սկզբին թեպետ և վոչ բավարար քանակով նախահաշիվ և շտատներ ձեռք բերել և այդ թվերով ձեռնարկել սիստեմատիկ աշխատանքի:

Վորպեսզի հաշվետվությունը ցրված չը լինի, յես կը խոսեմ յուրաքանչյուր բաժնի գործունեության մասին առանձին:

### 1. ԿԱԶՄ-ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ.

Այս բաժինը գոյություն է ունեցել Գլխավարի կազմակերպության առաջին իսկ որից: Յերկար ժամանակ նրա անմիջական հոգացողության նյութ է յեղել գավառային քաղաքավարներ կազմակերպելու խնդիրը. դեռ ևս 22 թ. վերջերին այդպիսիները բացակայում էին մեր գավառներից շատերում. ներկայումս միայն 5 գավառում կան հատուկ վարիչներ, 3 գավառում գավկոմների ագիտ-բաժնի վարիչները, իսկ 2-ում լուսբաժնի վարիչներն են կատարում գավառավարի վարիչի պաշտոնը: Մի քանի գավառներում գոյություն ունեն նաև քաղաքի հրահանգիչներ:

Թե տեղերում և թե կենտրոնում տարվելիք աշխատանքին վորոշ խոչընդոտ է հանդիսանում նաև քաղաքավարիչների հաճախակի փոփոխությունը: Հազիվ է մի ընկեր ծանոթանում աշխատանքի պայմաններին և ձեռքին, նրան փոխարինում են ուրիշով, գուցե և պատասխանատու կուսակցական, բայց քաղաքաշխատանքից տնտեղյակ ընկերով: Անհրաժեշտ է համագումարի վորոշումը՝ դիմել Կենտր. Կոմիտեին՝ հայցելով քաղաքավարիչների ամրացումը քաղաքավարական աշխատանքին, նույն իսկ գավառային քաղաքավարների վարիչների նշանակումը ա-



ուանց-լ Վո լսեալ թաղի մահաւանդութեան համարում եմ անցան կալի:

Բաղլուավարական աշխատանքի ասպարիզում հմուտ քաղ-լուավարիչների բացակայութեամբ մեր առաջ դնում եմ մի այլ հարվածային խնդիր—դա համապատասխան քաղլուսադասընթաց-ներ բանալու խնդիրն է: Այս կարիքին բավարարելու համար Գլխաղլուսավարը դեռ ևս անցյալ տարի ամառը ձեռնարկեց այդ-պիսի դասընթացների բացմանը: Ամեն ինչ պատրաստ եր' ծրա-գիր, դասախոսներ, գումար և այլն, մնում եր միայն գավառներից ստանալ կուրսանտներ: Յեւ չնայած վոր գավառներին հրահանգ-ված եր, վոր հատուկ ընկերոջ բացակայութեան դեպքում իրեն վարիչին մի ամսով թողնեն զալ այդ դասըն-թացները, գավառներից և վոչ մեկը, բացի Դարալագյազից չը դործուղեց այդպիսին մեր տրամադրութեան տակ և այդ դա-սընթացները չը բացվեցին: Այս ամառ նորից կրկնել այդ փոր-ձը համարում եմ ապարդշուն և կարծում եմ, վոր մեր այս պա-հանջը կը բավարարենք Կենտր. կուսակցական դպրոցում, քաղ-լուսաշխատանքի սեկցիա բանալով:

Կազմ-հրահանգչական բաժինը տարել է նաև հրահանգ-չական խոշոր աշխատանք: Վերջին 5 ամիսների ընթացքում ուղարկված է ավելի քան 200 հրահանգ քաղլուսաշխատանքի բոլոր ճյուղերին վերաբերյալ, վորոնք տեղերի ընկերների համար կարող էին ձեռնարկի գեր խաղալ: Սակայն միայն դրավոր հրա-հանգչական աշխատանքով բավարարվել չեր կարելի, հարկավոր եր կենդանի կապ հաստատել գավառների հետ: Այս բացը լրաց-րել են մեր հրահանգիչները, վորոնք մեկնելով գավառները, մի կողմից տեղի ու տեղը լուծում են գավառում ծագած քաղլուս-հարցերը և մյուս կողմից գալով կենտրոն տալիս են գավառի քաղլուսաշխատանքի ճիշտ պատկերը: Կարելի է ասել, վոր այն գավառներում, ուր յեղել են մեր հրահանգիչները, աշխատանքը նրանց գալով և սկսվել է, որ. Բայազետի գավառում, ուր մինչև հիմա չէ հաջողվել հրահանգիչ գործուղել, չը կա և վոչ մի աշխա-տանք: Վերջին 5 ամսով ընթացքում գավառներն են մեկել հրահանգիչներ 14 անգամ: Հետագայում թե գրավոր և թե կեն-դանի հրահանգչական աշխատանքը պետք է ավելի ուժեղացնել: Ինֆորմացիոն յենթաբաժինը վերջերս է միայն ստեղծվել

կազմ-բաժնում: Գավառներից ստացված զեկուցումներից կազմը-վում են պարբերական ինֆորմացիոն քաղվածքներ և տրվում մամուլին: Բացի դրանից յենթաբաժնի առաջ դրված է և ալ խոշոր գործ' տարված աշխատանքի հաշվառ և համապատասխան ստաստիստիկա կազմելը: Վերջերս վիճակագրական Կենտրոնա-կան Վարչութեան հետ յեկել ենք փոխադարձ համաձայնութեան և կազմել հարցազեկներ քաղլուսաշխատանքի բոլոր ճյուղե-րին վերաբերյալ, վորով հնարավոր կլինի քաղլուսահիմարկների ցանցը կանոնավորել: Կապի նկատմամբ պիտի ասել, վոր բավա-րար է, սակայն մի քանի գավառներ (Բայազետ, Զանգեզուր և Մեղրի) չեն ներկայացնում ամսական հաշվառութեաններ:

## 2. ԱՐՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԱԳԻՏԱՑԻԱՅԻ ԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱ-ՑԻ ԲԱԺԻՆ

Այս բաժնի աշխատանքները մեզանում պիտի համարել համադր կարևոր դպրոցա-դասընթացային բաժին: Նոյեմբեր ամսից նա ունեցել է հատուկ վարիչ, վոր կատարել է միաժա-մանակ նախագահի փոխանորդի պաշտոնը:

Բաժինը ունի 4 յենթաբաժին, վորոնք արտահայտում են քաղաքական լուսավորութեան երկու ճյուղերը:

Նախ' ագիտացիոն յենթաբաժինը: Պիտի ասել, վոր դեռ ևս աշխանից ագիտացիոն աշխատանքի կենտրոնացման հետևանքով Կենտր. Կոմիտեի ձեռքին, ագիտացիոն աշխատանքը այն սահ-մաններում, ինչպես գոյութեան ունեն մինչև այդ Գլխաղլուսավա-րում, վերանում է և ներկայումս ագիտացիոն յենթաբաժինը անց է կացնում կուսակցութեան ձեռնարկած կամպանիաները և քաղլուսահիմարկներում, այն է ակումբներում, խորճիթ-ընթեր-ցարաններում, դրադարաններում և այլն. հատուկ կամպանիաներ նա չէ անցկացնում: Այս տեսակետից մեկնելով ագիտացիոն յենթաբաժնի մասնակցել և կազմակերպված բոլոր կամպանիաներին—խորհրդների ընտրութեան, հոկտեմբերյան հեղափոխութեան, բաժ-բախադործութեան, ֆինանսական—հարկային, սոցիալական ապա-հովագրութեան, նավատորմի, յերիտկոմիտեյան ծնունդի և այլն: Բոլոր կամպանիաների նկատմամբ մշակվել են և ցրվել գավառները այդպիսիները քաղլուսահիմարկներում անցկացնելու ծրագրեր, թեղիաներ, գրախոսականներ և այլն:



Գրավոր աշխատանքային ասպարիզում Գլխավորումարը հատուկ որգան չունի նյութական հնարավորությունների բացակայության պատճառով: «Խորհրդային Հայաստանի» եջերում սակայն պարբերաբար արծածվել են քաղաքացիական պետության հարցերն ու խնդիրները, նույնպես համաձայնության ենք եկել «Մաճկալ»-ի խմբագրի հետ, վոր յուրաքանչյուր համարում տրվի մեզ մի յերես, ուր ժողովրդին հասկանալի լեզով պարզվին խրճիթ-ընթերցարանների, ակումբների, լիկվիդացիոն կայանների վերաբերող հարցերը, այլ և ղետեղվեն նյութեր այդ բոլոր հարցերի նկատմամբ, ինչպես որինակ՝ փորձնական դասեր, կենդանի լրագիր և այլն: Բացի սրանից հրատարակվել են մի շարք թերթիկների գյուղատնտեսական, բնական գիտելիքների, բժշկական և քաղաքական սերիաներից, վորոնք բարձրաձայն ընթերցանության նյութ են ծառայել խրճիթ-ընթերցարաններում: Պետք է սակայն շեշտել, վոր այս թերթիկների հրատարակման գործում շահագորգումած Ժողկոմատները, ինչպես՝ Հողժողկոմատը, Առժողկոմատը և այլն չեն ցույց տվել պետք եղած աջակցություն և բաժնի վարիչը ստիպված է յեղել ամիսներով ծեծել նրանց գոները՝ ստանալու մասնագետի կազմած թերթիկը այս կամ այն հարցի նկատմամբ:

Այստեղ հարուցվում է հրատարակչական գործի խնդիրը: Վերջին համար ել գաղտնիք չե, վոր մեզանում գրականության սով ե, մասնավորապես քաղաքական, գյուղատնտեսական, բնագիտական, բժշկական և այլ բրոշուրային գրականության: Մինչև այժմս Գլխավորումարը չե ունեցել նյութական հնարավորություն այդ գործը կարգավորելու, Պետհրատում մենք ունենք բավական քանակությամբ թարգմանված բրոշուրներ, բայց նյութական միջոցների բացակայությունը չի տվել մեզ հնարավորություն հրատարակելու այդ վերին աստիճանի անհրաժեշտ գրականությունը: Գլխավորումարի կողմից այս խնդիրը հարուցվել է Լուսժողկոմատի կողմից և Կենտր. Կոմիտեում, սակայն գրական լուծում չե ստացել: Կարծում եմ, վոր հրատարակչական գործը կանոնավորելու համար անհրաժեշտ է Գլխավորումարի հատուկ հրատարակչություն ունենալ և այդ գործի համար ռտանալ միջոցներ Կ. Կոմիտեից, Հողժողկոմատից, Առժողկոմատից և այլ շահագորգումած մարմիններից, վորով կվերա-

նան և այս Ժողկոմատների առանձին հրատարակչությունները և կարգի մեզ հնարավորություն գրադարանների և խրճիթ-ընթերցարանների այս աղաղակող կարիքը բավարարելու:

Աշխատցիոն յե.-բժ.-ը կազմակերպում է նույնպես դասախոսությունների գործը: Մշակված են թե կենտրոնի և թե գաղառների դասախոսությունների հատուկ ցիկլեր (50 ժամ) և տնցել են արդեն գործնական աշխատանքների: Դասախոսությունները կազմակերպվում են լայն մասսաների համար ձրխաբար, և նպատակ ունեն՝ մի կողմից տարածել բնագիտական, բժշկական և այլ գիտելիքներ, կովել կրոնական նախապաշարմունքների դեմ և, մյուս կողմից, տալ բանվորա-գյուղացիական աշխատավորության քաղաքական գաստիարակություն և տեղյակ պահել բնդհանուր գրությունը: Դասախոսություններին հետագայում ևս պետք է մեծ տեղ տալ և աշխատել ստեղծել մշտական առգիտորիա և սխտեմատիկ պարապմունքներ:

Յերկրորդ յենթարաժինը—դա գրադարանային յեթը-նե: Այս ասպարիզում մեզ գրաղեցրել է գրադարանները ստեղ գրապահատից քաղաքական և կուլտ-կրթական աշխատանքի մի միավոր դարձնելու հարցը: Գրադարանավարություն հարցի նկատմամբ մենք գտել ենք, վոր մեր գավառային գրադարանները իրենց սակավաթիվ գրքերով կարիք չը կա վերածելու տասնորդական սխտեմի, ուստի մշակված է ավելի պարզ՝ քարտային սխտեմ: «Գրադարանագիտյան այբբենարանը», վոր հանձնված է տպագրության, խոշոր գեր ունի կատարելու տեղերում այս հարցը կարգավորելու գործում: Գրադարանավարության գործի բարեկարգման և միորինակության, անշուշտ, խոշոր չափով կը նըպաստի կենտրոնական գրադարանային վարչության ստեղծումը, վորով կը հաջողվի կարգավորել գրադարանային գործը թե մեր և թե բանակի, պրոֆմիության և այլ գրադարաններում: Աշխատանքը այս ուղղությամբ պետք է շարունակվի: Այստեղ, գրքեր մատակարարելու հարցում պիտի ասել, վոր այն կողմից, բաղկացած հարյուր հազարավոր գրքերից, վոր մենք ստացանք Լուսժողկոմատից և, վորից մատակարարում ենք գավառներին տասնյակ հազարավոր գրքեր, արդեն վերջանալու վրա յե, իսկ յեղածը միայն 19—21 թ. հրատարակություններ են: Այսպիսով, նորից, իր ամբողջ ծանրությունը, ծագում և մեր առաջ նախահաշվի հավելացման խնդիրը՝ մի կողմից ձեռք բերելու և գրադարան-

11-243499/





ներին մատակարարելու մուսաստանի վերջին յերկու տարվա հարուստ քաղաքական, զինական և զեղարվեստական գրականությունը և, մյուս կողմից, ունենալու հատուկ հրատարակություն:

Ակումբային յենթաբաժինը նախ և առաջ մտահոգված է յեղել խրճիթ-ընթերցարանների կարգավորման խնդրով: Յեվ նրան հաջողվել է բոլորովին քայքայված ահումբային ցանցը վերականգնել. ներկայումս մենք ունենք հանրապետության մասշտաբով 231 խ.- ընթերցարան, ուր տարվում է ազիտացիոն համապատասխան աշխատանք՝ բարձրաձայն ընթերցում լրագրի և բրոշյուրների. դասախոսություններ, գյուղատնտեսական, բժշկական և այլ նյութերի շուրջ, կենդանի լրագիր, քաղաքական դատ, գրույց-միտինգներ և այլն:

Ակումբային գործի նկատմամբ նույնպես անց է կացված կենտրոնացում և ստեղծվել է ահումբային միասնական ցանց և կենտրոնական վարչություն, վոր զբաղված է ահումբային կանոնադրության և սեկցիաների աշխատանքի նախահաշվի մշակումով: Այս ուղղությամբ ևս պատրաստվում է մի հատուկ գրքույկ՝ «Ահումբային գործ» վերնագրով, վոր կը գա վերացնելու մի խոշոր բաց՝ տեղերի անտեղյակությունը այս ասպարիզում և մասնագետ ընկերների բացակայությունը:

Թատրոնական գործի ասպարիզում մշակված ռեպերտուարը, վորի մեջ մտնում են 15 հեղափոխական ազիտացիոն պիես, պիտի լրացվի, իսկ այդպիսիները ռեմինգտոնով տպագրելը և գաժառներին հայթայթելը պիտի շարունակել: Գալով կոոր, դեկոր, զբիմ և այլն տեղերին մատակարարելու խնդրին, այս ասպարիզում մեզ մնում է միայն պատահական յեկամուտներից ոգտարվելը, քանի վոր նախահաշվի մեջ չը կա և վոչ մի կոպեկ այս իրերի համար:

Խնչպես առհասարակ կենտրոնական գրաքննության գործը և մասնավորապես կինո-ժապավենների, ներկայացումների նկատմամբ զեղարվեստական կոնտրոլը կենտրոնացած է Գլխավոր և վարի ձեռքում, նույնը պիտի անել և գավառային կենտրոններում, ստեղծելով քաղաքավարի, զինվորական և արտակարգ հանձնաժողովի ներկայացուցիչներից գրաքննիչ կոլեկտիվ:

## ԴՊՐՈՑԱ-ԴԱՍՆԹԱՅԱՅԻՆ ԲԱԺԻՆ

Այս ասպարիզում մեր աշխատանքի կենտրոն եղել է անգրագիտության վերացման գործը և, այն հանգամանքը, վոր մենք ունենք 330 լիկկայան և 8 Ս աստիճանի դպրոց, խոշոր նվաճում է: Ներկայումս բաժինը մտահոգված է մեթոդական խնդիրներով և ամերիկյան ու կոմպլեկսով մեթոդը մեր իրականության մեջ իրականացնելու հարցով: Առաջիկա աշնանից մենք պետք է լիկկայաններին կից ունենանք նույնքան հաստատ և մի այլ տիպի դպրոցներից անց՝ կիսագրագետների, վորը ավարտող բանվորն ու գյուղացին, անցնելով մեր I և II աստիճանի դպրոցներով, կարողանան մտնել բանֆակ և նույնիսկ համալսարան:

Գաղութա-աշխատողների պատրաստումը ևս այս բաժնի մտահոգության նյութ է և զանազան տիպի դասընթացների կազմակերպումը մեզ համար անհետաձգելի և հարվածային խնդիր:

**Ծրագրա-գրախոսական բաժինը** լինելով նոր, հաջողել է առ այժմ կազմակերպել գրախոսական և ինքնագրագրման յենթաբաժինների գործը և, այս ասպարիզում, տարել է խոշոր կազմակերպչական աշխատանք: Արտաշիտ տունը իր կատարած դերով պիտի համարել մեր ամենախոշոր նվաճումը արտագրոցական և դպրոցական ազիտացիայի գործում: Յետագայում ամենախոշոր ուշադրություն պիտի դարձնել ինքնագրագրման հանձնաժողովի և ծրագրա-մեթոդական յենթա-աշխատանքների վրա, վորով պիտի, մի կողմից, բավարարի մեր կուսակցության վարքագիծը՝ անհատների դաստիարակության գործում և, մյուս կողմից, մեր բոլոր դասընթացները, դպրոցները և խմբակները ստանան մարքսիստական վոգով մշակված ծրագրեր:

Գլխավոր և վարի շտապներից դուրս գտնվում է **Ծրագրա-կան սեկցիան**, վորի ետևին նպատակն է տալ քաղաքաշխատանքին նյութական միջոցներ:

Արտագրական սեկցիան, չը նայած իր 5 ամսյա գոյությանը, չէ կարողացել արդարացնել իր վրա դրած հույսերը: Դրա ամենագլխավոր պատճառ պիտի համարել սկզբնական նյութական տվյալի բացակայությունը. անհրաժեշտ եր ունենալ մի գումար, վորը և դրվեր շրջանառության մեջ ու կարողանար տալ աճողություն: Զը նայած մեր դիմումներին անտեսական կոմիսարիտներին և կոպերատիվներին նույն-



խի փայտախորշ իրավունքով վորոշ գումար արամադրելու մեջ, Սրտադրական սեկցիային չը հաջողվեց այս միջոցները ստանալ:

Արտադրական սեկցիային հաջողվել է բանալ 2 դրամա-նութ՝ մեկը Յերեանում, մեկը Ալեքսպոլում: Միաժամանակ կապ է հաստատվում Մոսկվայի գանազան հրատարակչությունների հետ՝ գլխավորապես Գլխադրուսավարի «Красная новь» և Հոգեդո-կոմատի «Новая деревня», վերադառնալով Արտադրական սեկցիայի ներ-կայացուցիչը, ըստ մեր պահանջի, հասցնում է մեզ անհրաժեշտ գրա-կանություն: միջոցների բացակայությունը այստեղ ևս չի տալիս հնարավորություն գործը դնելու բավարար հիմքերի վրա: Յետ-գայում այս ուղղությամբ Արտադրական սեկցիան պիտի բանա-դրախանութներ շարաքլիսայում և Մանասում (կայարաններում), վորոնք միաժամանակ կը կատարեն նաև կրոսկի դեր:

Արտադրական սեկցիայի աշխատանքի յերկրորդ ճյուղը պի-տի համարել կինոյի գործը: Այս ասպարիզում սեկցիայի առաջ հարուցվեցին ավելի խոշոր դժվարություններ:

Յերկար ժամանակ ձեռնվում էր մասնավոր կինոյի («Ապու-լո») բունագրավման հարցը, և յերբ այդ հաջողվեց անցկացնել ժողկոմխորհում, նույն ժողկոմխորհի վորոշմամբ կինոն արվեց բանվորական ակումբին, իսկ մեզ խոստացվեց նախկին ժող-տրնախորհի դահլիճը: 2—3 շաբաթ արտասեկցիան զբաղված էր այդ դահլիճում բացվելիք կինոյի նախահաշիվ մշակումով և յերբ դեկտեմբերին այդ նախահաշիվը մշակված ներկայացվեց ժող-տրնախորհին, վերջինս դտավ անհարմար ժողկոմատնություն կից այդ շենքում ունենալ կինո—այսպիսով Գլխադրուսավարի կինոյի հարցը ջուրն ընկավ:

Վերջերս արտսեկցիան բացեց կինո Ալեքսպոլում, վորի յե-կամուտի 25 տոկոսը ստանալու է արտսեկցիան, մնացածը Ալեք-պոլի Գլխադրուսավարը: Միաժամանակ Գլխադրուսավարի դահլի-ճի ոգտագործման հարցի նկատմամբ սեկցիան մշակել է այդ դահլիճը գեղարվեստական ագիտացիայի համար ոգտագործելու նախագիծ, վորի համար անհրաժեշտ գումարը ստանալուց և դահլիճը կահավորելուց հետո, մի կողմից հնարավորություն կը ստացվի գեղարվեստական ագիտացիայի և «պրոպագանդայի ող» կազմակերպելու և, մյուս կողմից, դահլիճը շահագործման տալով

կը ստեղծվին սեկցիայի համար վորոշ նյութական հնարավորու-թյուններ:

Ներկայումս Արտադրական սեկցիան զբաղված է նախկին ամարային ակումբը կինո-այգու հարմարեցնելու գործով, արդեն մշակված է և ժողկոմխորհին ներկայացված վերանորոգման և կահավորման նախագիծը, վորի համար անհրաժեշտ է 5,000 ու: Ամառվա ամիսների ընթացքում կինո-այգին կարող է տալ դրա յեռապատիկը և այսպիսով, արտադրական սեկցիան աշխանից ունենալով ձեռքի տակ այդ գումարը, կարող է մտածել ուրիշ միջոցների և հնարավորությունների մասին:

Միաժամանակ մտցված է ժողկոմխորհ կինո գործի պետա-կանացման և անտեսական ինքնարդարացման սկզբունքի վրա գոյություն ունեցող կինո-Ջադուրյան դեկրետը, վորից հետո հնարավոր կըլինի ծայր տալ և կինո-ժապավենների արտադրու-թյան գործին, վորը, մի կողմից, կուժեղացնի սեկցիայի նյութա-կան միջոցները և, մյուս կողմից, կը ծառայի ագիտացիայի հա-մար թե մեզ մոտ և թե արտասահմանում:

Մի քանի խոսք էլ փոխհարաբերությունների հարցի մասին: Թեպետ անտեսական քաղաքականությունը ստիպեց մեզ փոխել Գլխադրուսավարի նախկին ստրուկտուրան և այն բոլոր մարմին-ները, վորոնք առաջ նյութականապես և կազմակերպչորեն կեն-տրոնացած էին Գլխադրուսավարում, այժմ բաժանված են և ա-ռանձին գոյություն ունին, ինչպես Պրոֆմիության կուլտրաժի-նը, բանակի քաղբաժինը, միլիցիայի քաղսեկրետարիատը և այլն, առկայն այն բոլոր մարմինների մեթոդական և իդեական ղեկա-վարությունը նորից մնում է Գլխադրուսավարում: Վերջինիս կու-լեգիան կատարել է մեծ դեր և կանոնավորել է փոխհարաբերու-թյունները: Պիտի շեշտել, վոր մեր կապը լավ է միլիցիայի հետ և թույլ յերիտկոմմիության հետ: Տեղերում ևս այդ կուլեգիանե-րը պիտի պարբերաբար հավաքվին:

Գլխադրուսավարը նույնպես մշակել է հատուկ փոխհարա-բերություն և կապվել Ալեքսպոլի Յերկաթուղաաշխատավոր պրոֆ-միության հետ, վորոնց քաղուսահիմնարկները մանում են մեր մի ընդհանուր ցանցի մեջ:

Այսպիսով, ընկերներ, յես աշխատեցի համառոտակի տալ մեր աշխատանքի 2 տարվա պատկերը: Տեսնում եք, վոր այնքան



ել շատ բան չե արված, սակայն այն, ինչ արված է, արդեն գրավական է, վոր Գլխավորությանը կանգնած է ճիշտ ուղի վրա, և նյութական հնարավորություններ ձեռք բերելուց հետո, նա կը դառնա ժողովրդական լայն մասսաների քաղաքական դատարարական համար անհրաժեշտ մի մարմին. դրան խրճ. — Ընթերցարանների, ակումբների և դրադարանների ընդունելությունը աշխատավորության կողմից մեզ տալիս է լրավունք այդպիսի հույսեր տածելու դեպի այդ գործը:

Վերջում գետեղում եմ քաղուստի մարկների ներկա ցանցը. թվերը բերված են տեղերի զեկուցումներից և ստացված պատգամավորներից:

| Գ. Ա. Վ. Ա. Ռ. | Լիկվիդացիոն | Կիսագլխավոր | Գրադարան | Խ.-ընթերցարան | Ակումբ ժող. տուն | Թատերաբեմ | Կինո |
|----------------|-------------|-------------|----------|---------------|------------------|-----------|------|
| 1. Յերեան      | 95          | 4           | 14       | 38            | 5                | 11        | 2    |
| 2. Նոր-Բայազետ | 27          | —           | 2        | 8             | 1                | 3         | —    |
| 3. Լոռի        | 45          | 2           | 5        | 18            | 8                | 14        | 3    |
| 4. Դարալագյալ  | 22          | —           | 3        | 18            | 1                | 6         | —    |
| 5. Ալեքսոլ     | 34          | 1           | 10       | 59            | 3                | 5         | 1    |
| 6. Դիլիջան     | 24          | 1           | 7        | 12            | 2                | 9         | —    |
| 7. Զանգեզուր   | 36?         | —           | 8        | 40            | 4                | 7         | 1    |
| 8. Դարաքիլիսա  | 15          | 1           | 2        | 6             | 1                | 9         | 1    |
| 9. Մեղրի       | 9           | —           | 1        | 5             | 1                | 5         | —    |
| 10. Եջմիածին   | 26          | 1           | 8        | 41            | 1                | 8         | —    |
| Գ ու մ ա ը     | 333         | 10          | 60       | 245           | 27               | 77        | 8    |

### ԴՊՐՈՑԱ-ԴԱՍՆԹԱՅԱՅԻՆ ԱԳԻՏԱՅԻՆ ՅԵՎ ՊՐՈԴԱԿԱՆԴԱ

(Զեկուցում ընկ. Ա. Խեչումյանի)

Քաղուստի գործունեությունը պետք է ընթանա ղուգահեռաբար ընդհանուր շինարարության հետ և նկատի առնի խորհրդային իշխանության հերթական խնդիրները: Յեթե օրվա խնդիրը արդյունաբերության բարձրացումն է, յեթե խորհ. իշ-

խանությունը ջանք և թափում տնտեսական բազա ստեղծելու հեղափոխության նվաճումները ամրապնդելու համար, ապա ղըգորոցա-դասընթացային բաժինը նպատակ պետք է ունենա պատրաստել դիտակից աշխատավորներ թե խորհրդային և թե կուսակցական շինարարության գործում: Այստեղից բխում է այն կարևոր հանգամանքը, վոր հասակավորների դպրոցում, ինչ տիպի էլ վոր նա լինի, դաստավությունը կապված պետք է լինի արդյունաբերության հետ, հետևապես քաղաքներում դպրոցը պետք է ունենա ինդուստրիալ բեկում, գյուղերում՝ գյուղատնտեսական: Այս խնդիրներն իրագործելու հարցում մեծ նշանակություն պետք է տալ այն մեթոդներին, վորոնցով պետք է ընթանան դպրոցներում պարապմունքները, մանավանդ անգրագիտության վերացման կայաններում:

Հասել է, վերջապես, սիստեմատիկ և պլանաչափ գործունեության ժամանակը այդ դպրոցներում. պետք է ընդմիջում վերջ դնել այն կարծիքին, թե ամեն գրագետ կարող է անգրագետի հետ պարապել: Հեղափոխության առաջին տարիներին թվում էր, թե ամեն մի գրագետ կարող և գրագիտություն սովորեցնող անգրագետին. ժամանակ չկար մտածելու մեթոդի՝ կամ ուսման բովանդակության մասին: Սակայն, Ռուսաստանի փորձը ցույց տվեց, վոր նման վերաբերմունքը վոչ թե տալիս է ցանկալի արդյունք, այլ շատ անգամ վնասում է գործին, ստեղծելով մեծ քանակությամբ անգրագիտության բեցիդիվիստներ: Ապարդյուն են անցնում ժամանակը և արված ծախսերը: Ուրեմն՝ նախ և առաջ՝ ճիշտ գիտական մեթոդի կիրառումը դաստավության մեջ է, առայժմ, սահմանափակ գործունեության ստադիա: Այս վերջին կետի վերաբերմամբ քաղուստի մարմինները համառոտության համագումարը յեկել է վորոշ յեղբակացության՝ սահմանափակելով հասակը 18—30 տարեկանով և վորոշելով սովորողների կատեգորիան: Անգրագիտությունը վերացվում է կադմակերպված բանվորության մեջ պրոֆսիությունների հետ միասին, վորի կուլտ-բաժնի հետ բաժինս պետք է պահի ամենաանբաղապարհապ և պահպանվում նաև յերիտմիություն, միլիցիայի և Կարմիր Բանակի քաղուստ-մարմինների հետ: Դպրոցա-դասընթացային բաժնի գլխավոր դերը կայանում է նրանում, վոր նա տալիս է ուղղություն, մանավանդ մեթոդական հարցերում, բո-



չոր հասակավորների դպրոցներին, ում կազմակերպածն էլ լինեն գրոնք:

Այս տեսակետից մեծ անելիքներ ունի բաժինն կից գոյություն ունեցող մեթոդական մասնագիտովը:

Դպրոցա-դասընթացային ագիտացիայի և պրոպագանդայի բաժինը պետք է ունենա յերեք յենթաբաժին.

1. Անգրագիտության վերացման հանձնագողով.

2. Հասակավորների դպրոցների.

3. Դասընթացների:

I. Անգրագիտության վերացումը այն խոշոր խնդիրներից մեկն է, վորի շուրջը պտտվում է քաղաքական գործունեությունը և կլանում նորա բյուջեի 50 %<sup>1</sup> և ավել գումար. այդ գործը դեռ ևս մնում է արտակարգ գործ՝ թե Ժողկոմխորհի դեկրետի վորոշմամբ և թե համաձայն Կոմ. կուսակցության Կենտր. Կոմիտեի վերջին շարժարկերի:

Այս առարկայում, չդադարեցնելով գրավոր ագիտացիան անգրագիտության վերացման անհրաժեշտության մասին, պիտի՝ հատուկ ուշադրություն դարձնել հրատարակչական աշխատանքի վրա և, առաջին նվազ, հրատարակել այբբենարան (քանի վոր եղածը անպետք է), դասագրքեր, ձեռնարկներ, մեթոդիկաներ և այլն: Անհրաժեշտ է, նույնպես, «Մաճկար»-ում պարբերաբար ունենալ «յերես»-ներ՝ արծարծելու համար անգրագիտության վերացման վերաբերյալ բոլոր հարցերը:

II. Հասակավորների դպրոցների յենթաբաժինը նախ և առաջ հետապնդում է անգրագիտության վերացման կայանների բովով անցած քանվորի կամ գյուղացու հաջորդական գրագիտության ամրապնդումը՝ տալով նրան հնարավորություն ոգտագործելու գիրքը և, ինքնուրույն կերպով, յուրացնելու նրա բովանդակությունը, զարգացնելով և հիմնավորելով նրա մեջ առողջ աշխարհայացք թե ընտելության և թե հասարակության յերեվելթների վերաբերյալ:

Այսպիսով, հասակավորների դպրոցները, ունենալով յերեք կոնցենտր, հաջորդաբար առաջ տանելով անգրագիտության վերացման կայանով անցած բանվորին և գյուղացուն, դարձնում են ին նրան պատրաստ մտնելու բանֆակ, 2-րդ աստիճանի կուսակցական դպրոց և կամ բարձրագույն այլ դպրոց:

Այսպիսով հասակավորների դպրոցները դասավորվում են հետևյալ կերպ՝

1. Անգրագիտության վերացման կայաններ—պարագում են 3—4 ամիս.

2. Կիսագրագետների դպրոցները, վորոնք տևում են 6 ամիս.

3. Բարձր տիպի հասակավորների դպրոցներ յերեք կոնցենտրով՝ մի տարվա, յերկու տարվա, յերեք տարվա տևողությամբ: Այս աստիճանի դպրոցների շարքում պետք է լինի 1-ին աստիճ. կուսակցական դպրոցը ևս:

Այս ցանցից յերևում է, վոր բոլոր տիպի դպրոցները անգրագիտության վերացման ցանցերից մինչև բարձրագույնը, պետք է շղկապված լինեն մի ընդհանուր օրգանական կապով: Ամեն մի աստիճանի դպրոց կազմում է շարունակությունը մյուսի, խորացնում է և լայնացնում նրա գիտելիքները թե հասարակագիտական, թե անտեսական և թե այլ հարցերում և տալիս է մի ամփոփ ցիկլ վորոշ գիտությունների: Սովորողը, ընդհատելով իր ուսումը այս կամ այն աստիճանի վրա, դուրս է գալիս դպրոցից վորոշ աշխարհայացքով, ոժտված վորոշ գիտելիքներով:

III. Դասընթացային յենթաբաժնի գործունեությունն ապատակն է պատրաստել համապատասխան ուսուցչական կադր՝ բաժնի ծրագրերը իրագործելու համար և քաղաքաշխատանքի այս կամ այն տեսակով պիտանի աշխատակիցներ:

Այդ նպատակով պետք է, ըստ ամենայնի, ոգտագործել ամառվա ամիսները՝ բանալով դասընթացներ ուսուցիչների, գրագործների և տկումբային աշխատողների համար:

Սակայն այս յենթաբաժնի աշխատանքի մեծագույն մասը պիտի ուղղված լինի քաղաքական գրագիտության տարածման, բացի նրանից, վոր վերևի հիշված բոլոր տիպի դպրոցներում և այբբենական անգրագիտության և կիսագրագիտության վերացման հետ զուգընթացաբար տեղի է ունենում նաև քաղաքական դաստիարակչական աշխատանք, անհրաժեշտ է հարվածային կարգով կուսակցության կազմակերպությունների հետ միասին հաղմակերպել քաղաքական գրագիտության դպրոցներ, գաղտնիացներ, կոմիսիաներ և այլն. թե իբրև առանձին հիմնարկներ և թե ձեռնարկությունաց ու հիմնարկությունաց կից: Միաժամանակ



անհրաժեշտ և պարզորոշել այդ տիպի դպրոցների սխառեմատիկ ծրագրոված բովանդակությունն ու մեթոդները:

Բաժնի հերթական խնդիրներն են կանոնավոր հաշվեառում անցկացնելուց հետո, խորացնել և ամուր հիմքերի վրա դնել նախ և առաջ անգրագիտության վերացման կայանները, կազմակերպել կիսագրագետների համար դպրոցներ և, հնարավոր չափով, բավարարություն տալ այն հասակավորներին, վորոնք մտադրություն ունին բանֆակ կամ համալսարան մտնելու: Պիտի նշելու, վոր բարձր տիպի դպրոցների մեծ կարիք և զգացվում վոչ միայն Ռուսաստանում, այլ և մեզ մոտ. դրան ապացույց բանֆակից դուրս մնացածների մեծ տոկոսը (մոտ 200 հոգի ըստ պրոֆմիտ. խորհրդի կուլտրաժնի տեղեկություն). սրանց ուսման փափագին Դվսբադկուսվարը Պրոֆ.միության հետ վորոշ գոհացում պետք և տա՝ կազակերպելով մի յերկու այդ տիպի դպրոց:

Այժմ անցնենք դասավորության մեթոդի հարցին: Համառուտական մեթոդիստ-պրակտիկների կոնֆերանսը բացարձակապես դեմ և արտահայտվում մանկական դասագրքերը հասակավորների համար գործածելու հարցի նկատմամբ: Այս կոնֆերանսում վերջնական լուծում ստացան թե մեթոդի և թե հասակավորների դասագրքերի բովանդակության խնդիրները: Ամերիկական մեթոդը բացարձակ հավանություն գտավ հնչյունական մեթոդի դիմաց: Ինչ վերաբերում և դասագրքերի բովանդակությանը. կոնֆերանսը յեկավ այն եզրակացության, վոր քաղաքական հարցերին վերաբերյալ նյութը պետք և անպայման մըտցնել անգրագիտության վերացման դասագրքերի մեջ: Խորհրդային շինարարությանը վերաբերող տնտեսական հարցերը պետք և նույնպես դառնան դասագրքերի նյութ: Միայն այս ձևով կարելի և հետաքրքրություն շարժել հասակավորների մեջ և կապել նրանց զրքի, լրագրի հետ, սրա հետ միասին՝ նաև հասարակական կյանքի հետ:

Յեթև գրագիտությունը ավանդելու խնդրում գերադասելի յե ամերիկական մեթոդը, առարկաների դասավորման գործում պետք և կիրառվի կոմպլեկսիվ մեթոդը: Դասերի բովանդակությունը պետք և ընդգրկի վոչ թե մի առարկա, այլ մի քանի առարկաների նյութ՝ իրար հետ ներքին որդանական կապով կապ-

ված. յեթև մենք աալիս ենք մի նյութ մի դասին, հետևյալ դասը պետք և ընթանա նույն ուղղությամբ, պարզաբանելով միևնույն նյութը ուրիշ կողմից. սրա համար հարկավոր և, վոր դպրոցը ունենա մի գլխավոր առարկա, վորը դասավանդության հիմք ծառայի, իսկ մյուսները լրացուցիչ նշանակություն ունենան: Այդ հիմնական առարկան պետք և լուսարանվի բազմակողմանի. որինակ, այդ տեսակի առարկան կարող և լինել Հայաստանի տնտեսական աշխարհագրությունը: Կոմպլեկսիվ մեթոդի կիրառման համար հարկավոր են թե պատրաստված ուսուցիչներ և թե համապատասխան դասագրքեր. այդ յերկու խնդիրները բաժնիս համար ամենակարևոր հերթական հարցերն են և, մոտիկ ապագայում, պետք և ստանան բավարար լուծում: Առաջին հերթին պետք և լույս ընծայվի համապատասխան դասագրքը անգրագետների համար, կազմակերպվեն ամառվա ամիսներում կարճատև կուրսեր ուսուցիչների համար: Այս գործում մեզ կնպաստեն Ռուսաստանի փորձը և տեսական հարցերի լուսաբանումը, ի հարկե, աչքի առաջ կառնվեն նաև Հայաստանի ուրույն պայմանները:

Ընդհանուր առմամբ պիտի ընդգծել, վոր քանի վոր մենք թեթև ագիտացիայից անցնում ենք խորացած պրոպագանդային, դպրոցա-դասընթացային ագիտացիայի և պրոպագանդայի աշխատանքը պետք և դառնա առանցք մեր քաղլուսաշխատանքի գործում: Յեվ վորքան այս աշխատանքը նոր և, այնքան շատ յեռանդ և ուշադրություն պիտի պահանջի նա քաղլուսավարիչներին:

Մեր հերթական 2-րդ համագումարին մենք պիտի կարողանանք արգեն հաշվի առնել այս աշխատանքի փորձը և կորեկտիվներ մտցնելով՝ նոր ուղիներ ընդգծել:

## ԾՐԱԳՐԱ-ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

(Զեկուցում ընկ. Գեվորգ Քացաղյանի)

Այս բաժինը բաղկացած և 3 յենթաբաժիններից, 1. ծրագրա-մեթոդական, 2. գրախոսական, և 3. ինքնադարգացման, վորին կից գործում և Արտաշիս առն:



Քաղաքացիական իրաւունքների համար մինչև այսօր չկան մարքսիստական վոգոզ կազմված ու մեր հերթական և ապագա խնդիրներին համապատասխան ծրագրեր և մեթոդական ցուցմունքներ: Մեր կուսակցական դպրոցներն ու Բաղժամբը չեն թաքցնում նախորդ մշակված ու հաստատուն մեթոդներով և ծրագրերով, այլ կրում են ինչ ժամանակավոր և մասնակի բնույթ: Յեւ այլ կերպ չեն և կարող լինել, վորովհետև հեղափոխական վայրկիւսներում, քաղաքական կռիւների և տնտեսական քայքայումների ժամանակ անկարելի էր լուրջ զբաղվել ծրագրային ու մեթոդական հարցերով: Ստեղծված կացութային խոշոր պատճառներից մեկն էլ այն էր, վոր մեր պատրաստված ու պատասխանատու ընկերները զբաղված լինելով այլ ավելի հրատապ ու հարվածային խնդիրներով՝ անկարող էին զբաղվելու վերահիշյալ գործով: Ղեկավարութունը մնում էր քիչ թե շատ վատահետեւ անձնավորութիւնների ձեռքին, վորոնք, սակայն, անկարող էին լինել ըստ անհրաժեշտի մեր պահանջները: Բոլորովին աչքաթող չանկու համար կուստուր կրթական ու քաղաքական լուսավորութային հարցերը՝ մենք «յեռլա» եինք գնում թերի ու անկատար դասագրքերով, ձեռնարկներով և, աշխատում էինք ժամանակավորապես բավարարվել յեղածով: Սակայն հիմա արդեն տնտեսական ու քաղաքական պայմանները բոլորովին փոխվել են, կործանված տնտեսութունը վերականգնվել, խորհրդային յերկրների Ֆեդերացիայի քաղաքական գիրքը բոլորովին ամրապնդվել է ու, չկան այլևս հարվածային խնդիրներ, այլ բոլորն էլ հավասարաբեւ են ու աշխատանքը համազոր կերպով պետք է տարածվի բոլոր ասպարեզների վրա:

Այդ ավյալներից յեւնելով ու, հիմնվելով ոբիեկտիվ պայմանների վրա՝ անհրաժեշտ է լուրջ ուղղորդութուն դարձնել մեր դպրոցների ծրագրերի ու մեթոդների վրա և մշակել դրանց մարքսիստական վոգոզ, վոր ունենանք պատրաստված ու գիտակից կոմունարներ:

Ժամանակ է արդեն հիմնական փոփոխութային յենթարկել դպրոցական ծրագրերն ու մեթոդները և հրապարակի վրա դրել նոր վոգոզ ու նոր կյանքի ու պրոլետարիատի նոր աշխարհին համապատասխան մեթոդիկա ու ծրագիր:

Սակայն մեզ ժառանգութուն է մնացել բուրժուական ու

մանք բուրժուական կառավարութիւններից՝ նիկոլաեշինայից ու դաշնակներից քաղաքականապես անդրադեռ մի հոծ մասագ: Շնորհիվ խորհրդային յերկրներում ստեղծված կացութուն ու միջավայրի՝ ժողովրդական ամենալայն մասաների մեջ ստեղծվել է մի հախուռն հոսանք դեպի լույս, դիատութիւն, կրթութիւն...

Բնական անհրաժեշտութային ու կարիքի ճնշման տակ բացվում են դրադարաներ, ակումբներ, խրճիթ-ընթերցարաններ ու թատրոններ: Բոլորը ձգտում են գիտութիւն ձեռք բերելու և ցրելու իրենց մտքի խավարը:

Ղոչ միայն ստեղծված կացութիւնից դրդված, այլ նաեւ յեւնելով կոմունիզմի հիմնական պահանջներից՝ պետք է ինքնազարգացման գործը կանոնավորենք ու կազմակերպված առաջ տանենք:

Կազմակերպվող ու սոցիալական վերջին պայքարը մզող պրոլետարիատի համար շատ թանգ է յուրաքանչյուր բոպեն ու նա չի կարող ժամավաճառ լինել, անսխաեմ պարապմունքներով միխմումն ստանալ այն ոգուտի, վոր պիտի ստանար սխտեմատիք ու նախածրագրված պարապմունքի ժամանակ:

Պետք է կազմակերպել ինքնազարգացման գործն ու դարձնել նրան բեղմնավոր, պետք է յեռանդի միխմումը ծախսելով՝ ջանալ ստանալ մաքսիմում արդիւնք:

Նրան չափազանց կնպաստի դրախտական բաժինն ու Արտաշխի տունը: Ղերջինիս մասին բավական խոսվել է մամուլում և կրկնելու կարիք չկա, իսկ դրախտական յենթաբաժինը թե կը կանոնավորվի մեր դրականութային դարգացումը, թե յուրաքանչյուր գործի համապատասխան գնահատութիւն կտա և, հընարավորութիւն կստեղծվի ցանկալի դիրք վերցնելու: Այս յենթաբաժնի գործունեութիւնը սերտորեն կապված է գրականութային կազմակերպման տեսակետից ծրագրա-մեթոդական յենթաբաժնի հետ: Այս աշխատանքի ընթացքում ևս ծրագիր և մըշակվելու և մատնանշվելու են այն ուղղութիւնները, վորոնցով առաջին հերթին պիտի ընթանան մեր պրոլետարական մատող մամուլն ու գրականութիւնը: Այդ աշխատանքի կարիքն առանձնապես զգալի է այժմ, յերբ առաջ են գալիս նորանոր ուղղութիւններ և մեր հրատարակչական գործի Ֆոնդը շատ քիչ է:



Պետք է ջանալ այդ չնչին ֆոնդը ոգտագործել ամենանը-  
պատահաբարմար յեղանակով և չափազանց զգուշ ու խիստ լի-  
նել նյութերի ընտրութեան գործում:

Այս բնութանուր ակնարկից հետո ցանկալի է վերլուծել  
յուրաքանչյուր յենթաբաժնի անելիքն ու գործակերպը և մատ-  
նանշել այն ուղիները, վորոնցով ընթանալու է դրանցից ամեն  
մեկը:

## 1. ԾՐԱԳՐԱ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ

Կունենա առանձին հանձնախումբ, վոր կազմված կլինի  
կարող է պատրաստված կուսակցական ընկերներից: Յուրաքան-  
չյուր տվյալ դեպքի համար կարելի է, և պետք է, հրավիրվեն  
Կ. Կ.-ի ու Յեր. Կ.-ի միջոցով համապատասխան ընկերներ, վո-  
րոնք և կլուծեն այդ դժվարին ու անհրաժեշտ խնդիրը: Ծրա-  
դրի մշակումը, վոր կլինի մարքսիստական վոգով, չի անջատ-  
վում մեթոդական խնդրից:

Այս հարցում, ինչպես նաև առաջին դեպքում, անհրաժեշտ  
է փորձառություն ունեցող կուսակցական ընկերների ոժտնա-  
կությունը: Վերջիններս կյանքից վերցրած իրենց փորձով կարող  
են զարկ տալ տարվող աշխատանքին ու ավելի կատարյալ դար-  
ձնել մեթոդները և ծրագրերը:

Ծրագրա-մեթոդական յենթաբաժինը սերտ կապ պիտի  
պահպանի գրականութեան հետ և աշխուրջ հսկի իր մշակած ու  
առաջադրած ծրագրերին և մեթոդներին՝ տեսնելու համար թե  
նրանք վորքան են համապատասխանում սեռ պահանջներին,  
ինչ թերություններ ունեն: Այդ հանգամանքը կպարզվի մշակ-  
ված ծրագիրը կիրառելուց հետո, յերբ մենք կլսենք գրական  
հնահատականը կատարված աշխատանքի ու ի նկատի կառնենք  
հետագա աշխատանքների ժամանակ:

Յենթաբաժինը դեռ չափազանց նոր է, ու մի ամուլ կյանք  
էլ չունի, և դեռ չի սկսել վորեւե ծրագրի մշակում: Սակայն դիմում է  
յեղած Ռուսաստանի Գլխավորութեան համապատասխան յեն-  
թաբաժնին, վոր մեզ ուղարկի իր մշակած ծրագրերն ու մե-  
թոդիկաներն, վորպեսզի դրանք հիմք ունենալով՝ Հայաստանի  
համար մշակենք տեղական պայմաններին համապատասխան ծր-  
ագրեր:

## 2. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ

Սա պետք է ջանա գնահատել մարքսիստական տեսակետից  
Հայաստանում լույս տեսնող բոլոր որագրերը, պարբերականե-  
րը, հանդեսներն ու հրատարակությունները: Այդ նպատակով  
արդեն համապատասխան դիմում է արված բոլոր հրատարակչա-  
կան մարմիններին ու քաղաքականներին, վոր 1923 թ. հունվար  
1-ից սկսած բոլոր հրատարակություններից մեկական որինակ  
ուղարկեն յենթաբաժնին: Մինչև հիմա արձագանքել են մեր գրու-  
թյանը միայն մի քանի խմբագրություններ («Թորհրդ. Հայաս.»,  
«Գյուղատնտ. կյանք» և կոմունիստ), իսկ մյուսներից դեռ  
լուր չկա: Սակայն գրախոսական յենթաբաժնի գործը կանոնա-  
վոր հիմքերի վրա դնելու և պարփակել կարողանալու համար  
ամբողջ մամուլն ու գրականությունը, անհրաժեշտ է վոր ջոկ  
գրախոսականներ կազմելով զբաղվենք և վոչ թե աշխատած լի-  
նենք գնալու ամեն մի նոր հրատարակութեան հետեից, վոր նը-  
րանից ձեռք բերենք: Դրա համար յուրաքանչյուր հրատարակ-  
չական մարմնի պարտականությունը պետք է լինի իր հրատա-  
րակությունների նմուշն ուղարկել մեզ:

Գրախոսականներ կազմելիս մենք կաշխատենք տալ տվյալ  
հրատարակութեան չափազանց սեղմ բովանդակութեանը, հնար  
յեղածին չափ հակիրճ քննադատական և կմատնանշենք այն ըն-  
թացքն ու ուղին, վորով ցանկալի կլինի վարել գործը:

Այս յենթաբաժնի աշխատանքների շնորհիվ վորոշ ու ձե-  
վավորված հունի մեջ կընկնի մեր գրականությունը: Գրախոսա-  
կանները կօժանդակեն թե հրատարակիչներին ու գրողներին և  
թե ընթերցողներին:

Մեր նոր ու մատաղ մամուլի և գրականութեան մեջ հա-  
ճախ մոռացվում են ետևան ու անհրաժեշտը և չըջագայություն-  
ներ են կատարվում ավելորդի ու անտեղիի աշխարհում: Բուր-  
ժվական ու մանր բուրժվական վոգով և իդեոլոգիայով դոս-  
տիճրակված ու սնված ինտրիգենցիան հաճախ մոռացութեան  
մեջ է ընկնում ու սկսում փրկափայլել:

Անհրաժեշտ է մի աշխուրջ հսկող աչք, վորը միշտ կմատ-  
նանշի այն փարոսը, դեպի ուր պետք է ընթանա պրոլետարիա-  
տի տիրապետութեան շրջանի և գալիք կոմունիստական հասա-  
րակակարգի գրականությունն ու մամուլը:



Մի շարք որեկտիվ պայմանների պատճառով այս յենթաբաժնին առանձին վարիչ չունի, այլ ամբողջ գործն ընկած է ընդհանուր ծրագրա-գրախոսական բաժնի վարիչի վրա: Նույնպիսի որեկտիվ պայմանների պատճառով առայժմ հնարավորություն չենք ունենա առանձին բյուջետային-գրքույկներով մեր գրախոսականները հրատարակելու: Այլ դրանք կդեպոզիտվեն մեր պարբերական կամ ամենուրեքս մամուլի եջերում:

### 3. ԻՆՔՆԱՉԱՐԳԱՑՄԱՆ ՅԵՆԹԱԲԱԺԻՆ

Սրա գործերը վարելու համար կազմվում է մի հանձնախումբ գործին ծանոթ ու մոտ կանգնած մարդկանցից, վորմնք ունեն իրենց նախադարձ կամ այս յենթաբաժնի վարիչը: Այս յենթաբաժնի գործունեությունը չափազանց բարդ է և անմիջականորեն կապված մասնաճյուղերի հետ: Չկա այլևս լուր կարճին-տալին աշխատանք: Պետք է ընդառնալ գնալ հասարակություն զարթուցման և գիտությունն ու գրականությունը զարթնել ամենքի սեփականություն: Մենք դեռ հնարավորություն ունենք անխտիր ամենքին տալու փոշ միայն միջնակարգ ու բարձրագույն կրթություն, այլ նաև յերիտասյան ու յեռտոտայան: Բոլորն էլ հնարավորություն չունեն անցնելու քաղաքները միջնակարգ կրթություն ստանալու: Սակայն ուժեղ և հախուռն ձրգտում գեպի կուլտուրան պարզ նկատելի է: Ժողովրդական հոծ զանգվածներ, վորոնք մինչև հիմա բուրժուական իրավակարգի հակասությունների ու ստեղծած կացություն պատճառով հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրելու, ծանոթանալու կամ նույն իսկ հեռավոր գաղափար ու պատկերացում ունենալու գիտություն և գրականության մասին, այսօր շնորհիվ խորհրդային հասարակակարգի, հաշակել են գիտությունն ու կուլտուրան և բուն տենչանք ունեն պարփակելու կուլտուրայի համայն արվյալները: Այսօր արդեն ինքնազարգացմամբ են պարապում փոշ թե ուռալվա նման ինտելիգենտական պատահական ու կազմակերպված խմբակներ և անհատներ, այլ բանվորներ ու գյուղացիներ, աշխատավորության հարազատ զավակներ:

Գիրքն ու լրագիրը հիմա համարվում են ու կարգացվում ամենայն տգանությունամբ այնպիսի գյուղերում ու վայրերում, ուր

ներանք մինչև այսօր չեն յերևացել տնդում: Պետք է ոգավել այդ հանգամանքից և կոմունիզմի իրականացումն արագացնելու համար՝ կազմակերպել ինքնազարգացմամբ պարապողների մի հսկայական ցանց, հիմնել «համալսարան համը»: Առանձին առանձին փոքրիկ խմբակները, խմբերին ու անհատներին պետք է կապել ընդհանուր կապով գրավոր հաղորդակցության կամ նամակների միջոցով:

Վորպեսզի մտքերի փոխանակությունն ու տեսակետների բաղխումը-փոխանցումը տեղի ունենա ինքնազարգացմամբ պարապող բոլոր աշխատավորների մեջ, կենտրոնը իր ինքնազարգացման յենթաբաժնի շնորհիվ ստեղծում է խիստ ցանց և նամակագրություն կենտրոնի միջոցով ամենքի հետ: Բոլոր ինքնազարգացմամբ պարապողները կարող են դիմել յենթաբաժնին և արժարձել իրանց հետաքրքրող խնդիրն ու պատասխան օպտակ ուրիշներին: Կամ օկսել հարցի շուրջը վիճարանություն: Ինքնազարգացմամբ պարապողը կարող է նաև խորհուրդ հարցնել իրեն հետաքրքրող հարցն ուսումնասիրելու համար: Խնչ գրականության բազմի կամ ինչ կերպ աշխատի ու ինչ ուղղությամբ ընթանա:

Մի խոսքով նախկին փակ խմբակային պարապմունքները դառնում են հրապարակական և խմբակը պարփակում է իր մեջ իրարից չափազանց հեռու գտնվող ու իրար չճանաչող անհատներ, վորոնք մտքերի փոխանակություն են ունենում, իրար խորհուրդներ տալիս ու ոժանդակում և ավելի լայն ու բազմակողմանի կերպով են քննում իրենց հետաքրքրող հարցերը:

Այս գործը կարող է կարճ ժամանակից հետո այնպես ընդարձակվել ու բարդանալ, վոր անկարելի կլինի բավականապես լրագրի մի եջով, ինչպես ծրագրվում է այժմ, այլ կարիք կըլլա ավելի առանձին որդան ունենալու:

Միևնույն ժամանակ ուղազայում կտրելի յե և պետք է իրադրվել նաև «համալսարան տանը» գաղափարը: Միասնաժողով ու կանոնավոր կերպով պետք է մատակարարել բոլոր ինքնազարգացումով պարապողներին նյութեր ու համալսարանական դասախոսություններ այնպիսի ձևով, վոր նրանք տանը նստած, առանց հարյուրավոր վերադարձ անցնելու կամ կարվելու իրենց աշխատանքից, լսեն համալսարանական դասախոսությունները:



ի հարկէ, այս վերջինս եազես չի տարբերվում այն ձևի աշխատանքներից, վոր հենց հիմա յենք սկսելու, այլ հանդիսանում է ավելի կանոնավորված ու օրասեմաւիք մի աշխատանք:

#### 4. ԱՐՏԱՇԽԻ ՏՈՒՆ

Վերահիշյալից անբաժան է Արտաշիի տունը: Սրա ֆունկցիան է՝ համախմբել իր շուրջը բոլոր արտադարացական աշխատավորներին կամ ինքնադարգացմամբ պարապողներին ու տալ անհրաժեշտ դասերությունները, ոժանդակություն ու խորհուրդները քաղմակողմանի և հեշտ ճանապարհով պարապելու ինքնադարգացմամբ: Այդ նպատակով հիմնում է մի շարք կաբինետներ, կաղմակերպում է եքսկուրսիաներ ու դասախոսություններ և ոժանդակ ձեռնարկների հավաքածուներ: Արդեն մի շարք գասախոսություններ տեղի յեն ունեցել մոզական լապտերի ողնությամբ: Կազմված նմուշներ կան և կազմվում են առարկայական գրախոսական գրացուցակներ:

Ստացված են մեծ քանակությամբ նոր դիագրամմաներ, վորոնք՝ ռելիեֆ կերպով կարող են ցուցադրել տեսականորեն անցածը: Ընթերցարանն ստանում է մեծ քանակությամբ ուսուերեն և հայերեն կենդրոնական լրագրեր ու ամսագրեր: Հաճախորդների թիվն որ ավուր աճում է և նրանց, Պարիքի դեպքում, տրվում են բացատրություններ:

Արտաշիի տներին շրջաններում համապատասխանում են խրճիթ-ընթերցարաններն ու տկումբները, վորոնք կորիզն են լինելու ինքնադարգացման խոշոր գործի: Ընդհանուր կուլտ-կըրթական պարապմունքներին կից պետք է հիմնել ինքնադարգացման խմբակներ խրճիթ-ընթերցարաններում և տկումբներում ու գրանց կապել կենտրոնի հետ: Այն գործը, վոր վարելու յ է կենտրոնը համապետական մասշտաբով, կարող են և պետք է կատարեն շրջանները շրջանային մասշտաբով: Բոլոր ինքնադարգացմամբ պարապողներից պետք է կաղմիլ խմբեր ու խմբերն ել գրավոր հաղորդակցության մեջ դնել իրար հետ: Միևնույն ժամանակ պետք է կապ պահել կենտրոնի հետ և, հետաքրքրական — կարևոր հարցերը, կենտրոնի միջոցով, ընդհանրության նյութ գործնել: Պետք է շրջաններն աշխատեն իրենց տեղական միջոց-

ներով խորհուրդներ ու ինստրուկցիաներ տալ կարիք զգացողներին: Պետք է անմիջականորեն ոգտվել մեր ուղարկած հրահանգներից և ինքնադարգացման գործը դնել կանոնավոր հիմքերի վրա: Դրան հատկապես շատ կոժանդակի մի մեթոդ, վոր հիմա կիրառվում է Արտաշիի տանը: Շրջանում յեղած գրքերի ցուցակները կաղմելիս, գրքի անվան հետ տալ նաև դրա համառոտ բովանդակությունը կամ, հնարավորության դեպքում՝ գրախոսականը: Շնորհիվ դրա՝ թե ինքնադարգացմամբ պարապողը կարող է, հաճախ, առանց կաղմնակի ոժանդակության, ոգտվել աղբյուրներից և թե խորհուրդներ տվողը կամ ինքնադարգացման գործը ղեկավարողը կկարողանա հեշտությամբ մատնանշել անհրաժեշտ գիրքը: Դրան զուգընթաց, մենք դարձյալ Արտաշիում արդեն սկսել ենք կաղմել առարկայական հետևողական գրացուցակներ, վորոնք նույնպես շատ կոժանդակեն ինքնադարգացմամբ գրաղվողներին: Հասարակական լայն խավերը կուլտուրապես պատրաստելու, նրանց գիտական մակարդակը բարձրացնելու և դրա հետ միասին խորհրդային յերկրների քաղաքական ու տնտեսական վիճակը ամրապնդելու և բարվոքելու լավագույն զենքերից մեկն է ինքնադարգացման խմբակների կաղմակերպումն ու նրանց աշխատանքի սխտեմատիք և նպատակահարմար ձևավորումը:

Այդ հանգամանքի վրա պետք է կենտրոնացնեն իրենց ուշադրության և եներդիայի խոշորագույն տոկոսը, վորովհետեւ դա է անհրաժեշտ ու կարևոր: Միաժամանակ այդ խմբակների անդամները կարող են իրենց խոշոր ողնությունը մատուցել գրախոսական յենթաբաժնին՝ տալով գրախոսականներ զանազան հրատարակությունների մասին:

Ինչպես արդեն տեսանք, ամբողջ գործը նոր է և կան վորոշ խոչընդոտներ, սակայն հուսով ենք, վոր միացյալ ուժերով կենտրոնի ու գավառների, կկարողանանք մինչև մյուս տարի հսկայական գործ կատարել ու զեկուցել վոչ թե միայն անելիքների մասին, այլ նաև կատարածի՝ բաց ճակատով ու հպարտ:

Դեպի գործ, հենց վաղվանից:



## ՔԱՂԱՌՈՒՍՎԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՊՐՈՓԵՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

(Անկուցում բնկ. 2. Գասպարյանի)

Արհեստակցական կազմակերպությունները, վորպես մասնաճյուղիկներ, վոր ավելի մեծ կարիք ունեն կուլտուր կրթական և, գերազանցորեն, քաղաքական դաստիարակություն, այդ աշխատանքները տանում են հատուկ կուլտուր-կրթական կազմակերպության՝ միութենական կուլտ-բաժինների միջոցով:

Կուլտ-աշխատանքը արհեստակցական միություններում (ինչպես տարիֆային և կազմակերպչական աշխատանքները), կազմում է արհեստակցական շարժման անբաժան, որդանական մասը: Վորպես այդպիսին, նա առաջին հերթին պետք է ծառայի այդ շարժմանը: Կուլտուրական աշխատանքը արհեստակցական միություններում, պետք է աշխատի աշխատավորության լայն մասանների գեփականություն դարձնել արհեստակցական շարժման գաղափարները, ծանոթացնել նրա պատմության, ձևերին և մեթոդներին, լուսարժանել այդ շարժման հետ կապված բոլոր խնդիրները: աշխատանքի պահպանություն, օոցիալական ապահովագրություն, կոլեկտիվ պայմանագիր և այլն. մի խոսքով, նա պետք է դառնա պրոֆշարժման ագիտացիոն-պրոպագանդիստական մարմինը:

Բայց հնարավոր չէ այդ ասպարիզում օրստեմատիկ աշխատանքներ տանել, յեթե չունենք պատրաստված պրոֆաշխատողների կազմ: Այդ պատճառով, առաջին հերթին պետք է կազմակերպել պատասխանատու պրոֆաշխատողների՝ միությունների քարտուղարների, վարչության անդամների և տեղկոմների անդամների պրոֆեսսիոնալ կրթության գործը: Ի նկատի ունենալով, վոր Հայաստանում շնորհիվ մի շարք օրեկտիվ պայմանների հնարավոր չէ պրոֆաշխատողների դպրոց կամ դասընթացներ բանալ, առաջնակարգ նշանակություն և կարևորություն պետք է տալ բանվորական ակումբներին կից պրոֆեսսիոնալ խմբակներին, վորանդ պետք է սիստեմատիկ զբոսցնել կազմակերպել և, դիսկուսիոն կարգով, լուծել պրոֆեսսիոնալ շարժման այս կամ այն ասպարիզում տարած վիճելի հարցերը:

Մեր իրականության մեջ, վորտեղ պրոֆեսսիոնալ շարժումը միայն յերկու տարվա պատմություն ունի, լայն աշխատավորական մասանները շատ քիչ գաղափար ունեն այդ շարժման մասին: Անհրաժեշտ է սիստեմատիկ զբոսցնել միջոցով տարրական հասկացողություն տալ այդ շարժման մասին և բարձրացնել ներանց գիտակցությունը պրոֆեսսիոնալ շարժման նկատմամբ: Այս ասպարիզում խոշոր գեր պետք է խաղան միության քարտուղարները, վարչության անդամները և տեղկոմների անդամները:

Պրոֆեսսիոնալ շարժման տեսակետից խոշոր անելիքներ կան հրատարակչական աշխատանքների ասպարիզում: Մեր նոր գրականությունն առհասարակ աղքատ է, իսկ պրոֆեսսիոնալ շարժման վերաբերյալ գրականություն բոլորովին չկա: Այդ յերկու տարվա ընթացքում պրոֆեսսիոնալ կազմակերպությունները զբաղված հարվածային կազմակերպչական աշխատանքով, ժամանակ և միջոցներ ու տեխնիքական հնարավորություն չեն ունենալ հրատարակչական աշխատանքներով պարագելու: Արհեստակցական կազմակերպությունների որդան շաքաթաթերթը, վորը այդ ասպարիզում խոշոր անելիքներ ունի, հրատարակվել է վերին աստիճանի աննորմալ պայմաններում և անկանոն:

Գրավոր ագիտացիան պրոֆեսսիոնալ աշխատանքների մեջ պետք է համարել ամենահարվածային աշխատանքներից մեկը և գերազույն յեռանդ ու միջոցներ գործադրել, վորպեսզի հնարավոր լինի փոքր ի շատ և ղեկավարիչ բնույթ կրող մի շարք ձեռնարկներ հրատարակել: Բանվորական պրոֆեսսիոնալ կազմակերպությունների պարբերական որդանը պետք է լինի հրատարակչական աշխատանքների կենտրոնում:

Բայց վորեք քաղաքական աշխատանք տանել և, փոքր ի շատե, արդյունավետ հետևանքներ ստանալ, այն ժամանակ, յերբ գեո պրոֆմիություններում կան մարդիկ, վորոնք տարրական գրագիտություն չգիտեն, շատ դժվար է, այդ պատճառով և պետք է անգրագիտության վերացման գործը համարել ամենահարվածային աշխատանքներից մեկը: Այստեղ հարց է ծագում՝ կա մեկ ղեկավարող որդան՝ քաղաքական, վորը կոչված է այդ աշխատանքները տանելու, ինչու պետք է արհմիություններն ևլ այդ աշխատանքը հանձն տանեն և, արդյոք, դու գուցե հեռավորություն



չի մտցնում այդ աշխատանքների մեջ: Այդ այդպես կլինեն, յեթե քաղաքացիները ունենան տեխնիքական լայն հնարավորություններ և անսահմանափակ միջոցներ բոլոր անգրագետների համար դպրոցներ բանալու և բոլորին ել հավասարաչափ բավարարելու համար: Բայց, վերոհիշեալ քաղաքացիները այդ հնարավորությունները չունին և արհեստակցական կազմակերպություններն ել անմիջապես շահագործված են այդ աշխատանքներով ու, վերպես մասսայական կազմակերպություններ, համապատասխան ապագաբար և գործը կազմակերպելու համար տեխնիքական հնարավորություններ ունեն, այդ պատճառով և արհեստակցական կազմակերպությունների մեջ անգրագիտության վերացման գործը կազմակերպում են անկախ՝ սեփական միջոցներով, ունենալով քաղաքացիների մեթոդական և գաղափարային ղեկավարությունը:

Կուլտուր-կրթական ասպարիզում ներկայումս պրոֆեսիոնալ կազմակերպությունները թեև կոչվում են մի շրջան, յերբ պահանջվում է ավելի խորացած սիստեմատիկ աշխատանք: Լայն աշխատավորական մասսաների ցուցահանած հետաքրքրությունը դեպի լուրջ գիտություններն ու սիստեմատիկ ուսումն, պարտավորեցնում են արհեստակցական կազմակերպություններին և առհասարակ կուլտուրական ասպարիզում աշխատող բոլոր հիմնարկներին չբավականանալ մակերեսային դասավանդումով, այլ տալ խորացրած, լուրջ սիստեմատիկ գիտելիքներ:

Այդ տեսակետից ուսուցման ծրագրերը այնպես պետք և կառուցանել, վոր բանվորը կամ ծառայողը, իր կրթական աշխատանքները սկսելով տարրական գրագիտության դասընթացներում, վերջացնեն համալսարանում: Պետք է այնպես դասավորել, վոր ծրագրորեն անգրագիտության վերացման առաջին աստիճանի դպրոցին հաջորդեն յերկրորդ աստիճանը, ապա՝ բանվորական ֆակուլտետը և բարձրագույն դպրոցը:

Այսպիսով ստացվում է խիստ ծրագրով կառուցված մի հոյակապ շինք, վորի միջից անգրագետ բանվորը գուրս է գալիս Խորհրդային իշխանությունը և արդյունաբերությունը ղեկավարելու համար անհրաժեշտ գիտական պաշարով:

Յերկրորդ տարին է, ինչ Հայաստանում սկսվել են անգրա-

գիտությունների վերացման աշխատանքները, բայց մինչև այժմ հազիվ անգրագետների կեսը գրագիտություն սովորած լինի, և դա այն պատճառով, վոր վորոշ կազմակերպչական սիստեմ չի կիրառվել, հարվածային վորոշ աշխատանք չի տարվել, այլ պատահականորեն բացվել են դպրոցներ, վորոնք յերբեմն չունենալով վորոշ նյութական-դրամական բազա, առանց իրենց գործնավարելու, փակվել են: Այժմ, յերբ մենք թեև կոչվում ենք խաղաղ, շինարարական աշխատանքների շրջանը, անգրագիտությունը ամենակարճ ժամանակամիջոցում լիկվիդացիայի յենթարկելը պետք է համարել ամենահարվածային քաղաքացիական աշխատանքը:

Այդ տեսակետից արհեստակցական կազմակերպությունների գերագույն որդանը Հ. Ա. Մ. Խ. վորոշել է՝ մինչև 30-յն տարվա սեպտեմբերը վոչ մի անգրագետ չպետք է մնա պրոֆ-միտություններում: Եթե կլինին Պրոֆմիտության անդամներ, վորոնք, հակառակ տված բոլոր դյուրությունների, կմնան անգրագետ, նրանք կընտրվելու յեն միտություններից, վորպես պրոլետարիատի դասակարգային գիտակցության չհամապատասխանող անհատներ:

Յերկու տարի յե, ինչ Հայաստանում տեսմանվել և Խորհրդային իշխանություն, իսկ նախ քան այդ ուժեղ դասակարգային պայքար գոյություն չի ունեցել, չենք ունեցել խոշոր արդյունաբերական ձեռնարկներ մեծաքանակ ինդուստրիալ բանվորներով, այդ պատճառով և գասակարգային գիտակցությունը և կոմունիստական բնադոները մեր աշխատավորության մեջ չեն բյուրեղացել և խորը արմատներ ձգել: Այդ տեսակետից քաղաքացիական աշխատանքների առաջնակարգ խնդիրներից մեկն է՝ քաղաքականապես դաստիարակել մեր աշխատավորությունը, բարձրացնել և բյուրեղացնել նրա դասակարգային գիտակցությունը, վորի համար անհրաժեշտ է առաջին հերթին կազմակերպել քաղաքական գրագիտության աշխատանքները:

Այն մեթոդները, վորով կազմակերպվում էին այդ աշխատանքները մինչև հիմա, այլևս չեն կարող բավարար համարվել: Այժմ բավականանալ մակերեսային, տրաֆարետ ագիտացիոն աշխատանքով չի կարելի: Պետք է ձեռնարկել սիստեմատիկ մար-



սխառական դաստիարակութեան, ասանկով խորացրած մեթաֆիզիկան աշխատանքներ: Այս աշխատանքները պետք է անբաժան շաղկապված լինեն գրադիտութեան ուսուցման հետ և, պետք է, մասնին այդ դասընթացների ծրագրի մեջ և տարվեն նույն հաստատականութեամբ:

Արհեստակցական կազմակերպութեաններում քաղաքական խռատվորութեան աշխատանքները պետք է կենտրոնացած լինին բանվորական ահումբներում: Բանվորական ահումբները պետք է դառնան այն կենտրոնները, վորտեղից տարածվելու յն գիտութեանն ու մարքսիստական դաստիարակութեանը լայն աշխատավորական մասսաների մեջ:

Բանվորական ահումբը յերկու նպատակ պետք է հետապնդէ. կազմակերպել լայն աշխատավորական մասսաների համար հանգստի նպատակահարմար ձևեր և բարձրացնել նրանց կուլտուրական մակարդակն ու կամօնիստական դաստիարակութեան տալ:

Ահումբները պետք է աշխատեն առաջին հերթին հեռացնել բանվորներին և աշխատավորներին գինեւոների և թեյատոների մոռյլ և թմրեցնող մթնոլորտից, քաշելով նրանց դեպի իրենց և տալով ավելի գիտակցական հանգիստ: Դրա համար պետք է այնպես կազմակերպել, վոր աշխատավորութեանը հաճույքով հաճախի ահումբը, խորը համոզված, վոր այնտեղ կարող է լիակատար հանգիստ գտնել: Կարելի է դրա համար թերեւս խաղեր կազմակերպել (նարդի, գոմինո, շախմատ, տամա կայն), ընդհանուր մթնոլորտը պետք է հարազատ լինի բանվորին և աշխատավորին և, նրա համար ոչ թե վանող, այլ ձգող լինի: Առաջին որվանից չպետք է վախեցնել բանվորներին բարդ խնդիրների ուսուցանասիրութեամբ և խողոր ազմկող անուններով:

Միայն այն ժամանակ, յերբ լայն աշխատավորական մասսաները կընտելանան ահումբին, ահումբը հաճախելը կդառնա ներտանց համար պահանջ, միայն այն ժամանակ կարելի է անցնել քուն նպատակին՝ կուլտուրական բարձրացմանն ու քաղաքական դաստիարակութեանը: Բայց այս գեպքում ել պետք է իրիսազգույշ սկսել: Պետք է սկսել ամենապարզից և գրավչից:

Կուլտուրական աշխատանքները բանվորական ահումբներ-

քում պետք է տանել սեկցիոն պարագմօնքների միջոցով, աշխատելով ամեն կերպ զարկ տալ կոլլեկտիվ ստեղծագործութեան թափին, ամեն կերպ խրախուսելով և առաջ քաշելով քիչ թե շատ ընդունակներին և քաշալերելով նրանց յառաջագիմական յուրաքանչյուր քայլերը: Ահումբային սեկցիոն պարագմօնքների մեջ, ինչպես վերև հիշեցինք, առաջնակարգ տեղ պետք է բռնեն պրոֆեսսիոնալ և մարքսիստական խմբակները: Բայց հատուկ ուշադրութեան պետք է դարձնել գեղարվեստական դաստիարակութեանը: Այդ տեսակետից հատկապես զարկ պետք է տալ դրամատիքական, յերաժշտական, գրական-գեղարվեստական խմբակներին: Այդ խմբակներում պետք է ոգտագործել հին բուրժուական գեղարվեստի և գրականութեան լավագույն պիտանի ստեղծագործութեանները և, մտցնելով այնտեղ բանվորական, աշխատավորական ելեմենտը, տալ նրան արդյունաբերական գունավորութեան: Նամանավանդ մասսայական աշխատանք հնարավոր է դրամատիքական խմբակներում, ուր կարելի է կոլլեկտիվ ստեղծագործութեանը յերևան բերել խմբական բեմադրութեանների կազմակերպութեամբ, յերբ ամբողջ կոլլեկտիվը միասին գրում է և բեմադրում այդ կոլլեկտիվի ստեղծագործութեանը:

Բանվորական ահումբները մասսայական կազմակերպութեաններ են և աշխատանքների մեթոդն ել այնտեղ պետք է համապատասխանի դրան: Պետք է այնպես տանել աշխատանքները այնտեղ, վոր անհատի ղեկավարութեանը ուժեղ կերպով չզգացվի, այլ ամեն մի ձեռնարկ բղիթ մասսայի միջից, առանց վերևից թելադրված լինելու:

Դրադարանային աշխատանքների, առաջարկում շնորհիվ հին անտեսական քաղաքականութեան, յերբ գրականութեանը անսահմանորեն խողոր հոսանքով մտնում եր լայն աշխատավորական մասսաների մեջ, վորոշ սիստեմ այդ աշխատանքի մեծ բացակայում եր: Այժմ, յերբ յուրաքանչյուր գիրք մեծ գովարութեամբ է ձեռք բերվում և մեծարժեք է, պետք է հատուկ սիստեմ մտցնել այդ գրքերը խնայողաբար և նպատակահարմար ոգտագործելու համար: Այդ տեսակետից, նկատի ունենալով, վոր մեզ մոտ քաղաքները այնքան մեծ չեն, կարելի է մեկ խողոր գրադարան հենտրոնացնել բանվորական ահումբներում և միայն նրա հյու-



դերը կազմակերպել խոշոր ձեռնակութիւններում, աշխատելով յուրաքանչյուր գիրքը, հնար եղածին չափ, լայն շրջանառութեան մէջ դնել:

Ի նկատի ունենալով, վոր մեր մասսան՝ դեռ լիքը սնոտիապաշտութիւններով, շատ հեռու և կանգնած եղել սանիտարական բժշկական խնդիրներից և այն հանգամանքը, վոր տարափոխիկ հիվանդութիւնները խիստ տարածված յեն մեղանում ամառը, անհրաժեշտ և լուրջ աշխատանք տանել սանիտարական լուսավորութեան ասպարիզում, աշխատելով պարզ գաղափար տալ բոլոր հիվանդութիւնների մասին, տալով նրանց կանխող միջոցների մասին գիտելիքներ, տալ տարրական հասկացողութեան առողջապահութեան մասին և ծանոթացնելով բժշկութեան նորագոյն նվաճումների հետ:

Ամփոփելով վերոհիշյալը, պետք և շեշտել մի հանգամանք, վոր առ հասարակ լուսավորութեան ասպարիզում հնարավոր չե որևէ արդունալիտ աշխատանք, յետ և չլինի լիակատար կոնտակտ բոլոր շահագրգռված կազմակերպութիւնների աշխատանքների մէջ: Հինգ տարվա փորձը Ռուսաստանում կույրերին անգամ այդ բանում համոզել ե: Անհրաժեշտ և բոլոր ցրիվ ցրիվ կազմակերպութիւնների անշատ աշխատանքները հավաքել դնել մի հունի մէջ և մի ընդհանուր գեկավարութեամբ, մի ուղղութեամբ տանել:

Քաղաքավարական աշխատանքների շրջանում այս համագումարի առաջ դրված բոլոր հարցերից ամենակարևորը պետք և համարել դա, վորի հաջող լուծումից կախված կլինի ապագա աշխատանքների արդունալիտութիւնը:

## ՅԵՐԻՏ-ՄԻՈՒՅՅԱՆ ՔԱՂ-ԼՈՒՍԱՎՈՐՁԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ.

(Թեգիսեն քնկ. Մանուկի գեկուցման)

I. Համահայկական 2-րդ համագումարը, իսկ հետագայում համառուսական 5-րդ համագումարը կարելի և համարել մի նոր թեքման շրջան յերիտասարդութեան շարժման զարգացման մէջ: Մինչև այդ համագումարները՝ միութիւնը (և ընդհանրապես կուսակցութիւնը և խորհրդային որդանները) ամեն կերպ աշխատում եր հարմարեցնել իր աշխատանքները տնտեսական նոր քաղաքականութեան առաջադրած պայմաններին:

II Տնտեսական նոր քաղաքականութեան պայմաններում զարգանում և պետական-սոցիալիստական և մասնավոր տնտեսութիւնների պայքարը: Մի կողմից նա լայնացնում ու զարգացնում և մասնավոր նախաձեռնութիւնը՝ կապիտալիստական շահագործման տնտեսները, իսկ մյուս կողմից զարկ և տալիս և կենդանացնում արդյունաբերական և գյուղատնտեսական կյանքը և բարձրացնում ու բարելավում բանվոր դասակարգի և գյուղացիութեան տնտեսական դրութիւնը: Յե վորովհետեւ պետական-սոցիալիստական և մասնավոր տնտեսութիւնների պայքարը ընդունում և ձգձգվող բնույթ և, նեպի պայմաններում, սոցիալիստական տնտեսութեան տարրերի զարգացումը հանդիպում և մի շարք խոչնդոտների, ապա հեղափոխական պրոլետարիատի ավանգարդի և նրա պահեստ յերիտասարդ բանվորութեան և գյուղացիութեան դասակարգային գիտակցութեան կայունութեան ուժեղացումը և կոմունիստական ու մարքսիստական կրթութեան հարցը, դառնում և առաջնակարգ խնդիրներից մեկը:

III. Տնտեսական նոր քաղաքականութեան մի շարք բացասական հետեանքները ավելի ևս դժվարեցնում են յերիտասարդութեան կոմունիստական կրթութեան գործը և ներկայանում մի մեծ վտանգ յերիտասարդ սերնդի հեղափոխական զարգացման համար: Մանավանդ տնտեսութեան զարգացումը առաջ և բերում անհատականութիւն, կաշառակերութիւն, սեփականութիւն, աշխատականութիւն և բարոյական աշխատում՝ տիրութեան տենչ, գաղափարական և բարոյական կուսակցութեան տենչ, վոր հող և պատրաստում հակա կոմունիստական կուսակցութեան և խմբակների աշխատանքների համար և մանր բուրժուական զաղափարականութեան տարածման, նամանավանդ յերիտասարդ բանվոր-գյուղացիական մասսաների մէջ:

IV. Մյուս կողմից՝ մանր-բուրժուական հոգեբանութեան զարգացումը գյուղում, սեփականատիրական բնադդի և կուլակական տարրերի տնտեսական ուժեղացումը և ազդեցութիւնը, և գյուղացի յերիտասարդութեան նյութական և տնտեսական կախումը ծնողներից, առաջ և բերում գյուղական յերիտասարդութեան մէջ նույն մանր-բուրժուական հոգեբանութիւնը:

V. Բայց վերև յիշած նեպի բացասական հետեանքների կողքին՝ արդունաբերական և գյուղատնտեսական կյանքի բար-



ձրացման և կենդանացման հիման վրա, ստեղծվում են բարեհաջող պայմաններ տանելու լայն կուլտուր-կրթական աշխատանքներ երիտասարդության մեջ: Այդ աշխատանքները պետք է ուղղվեն և ուղղվել են նոր տնտեսական քաղաքականության քայքայիչ հետևանքների դեմ և երիտասարդ բանվոր-գյուղացիական մասունքները ենթարկել պրոլետարական իդեոլոգիային: Յև այդ պայմաններում տարված մի տարվա աշխատանքի ընթացքում միլիոններ կարողացել են լուծել իր առաջ դրած մի շարք խնդիրներ և հարմարեցնել իր աշխատանքները այդ նոր պայմաններին, ուժեղացնել կազմակերպչորեն իր շարքերը և, դրա հետ միասին, իր ազդեցությունը անկուսակցական բանվոր-գյուղացիական մասսաների վրա:

Կիրառելով կյանքում քաղ-լուսավորչական աշխատանքների նոր ձևեր, հնարավոր եղավ կենդանացնել միութայն աշխատանքները, առաջ բերել հետաքրքրություն և սեր դեպի գիտությունը, և բարձրացնել վորոշ չափով միութայն անդամների պատրաստվածության քաղաքական մակարդակը: Այժմս պիտի անցնել երիտասարդության լուրջ, սիստեմատիկ կոմունիստական կրթության, ոգտագործելով կրթական բոլոր մեթոդները:

VI. Յերիտասարդության ընդհանուր գիտական մակարդակը բարձրացնելու խնդիրը հանդիսանում է նախապայման վերելից քաղաքական լուրջ աշխատանք տանելու համար, կուլտ-լուսավորչական աշխատանքները պիտի կազմեն կոմունիստական կրթության մի մասը և խթան հանդիսանան կոմունիզմի գաղափարների դարգացման ու տարածման: Ամբողջ կուլտուր-կրթական աշխատանքները — քաղաքներում և գավառական կենտրոններում պետք է կենտրոնացնել ակումբներում, վորտեղ և հնարավոր է համախմբել յերիտասարդությունը:

Այդ տեսակետից առաջնակարգ խնդիրներից մեկն է, եթե ոչ բոլոր, գոնե աչքի ընկնող գավառական կենտրոններում, հիմնել ակումբներ: Վորտեղ հնարավոր չեն ունենալ ակումբներ, պետք է ոգտագործել կուսակցական և բանվորական ակումբները, կազմակերպելով երիտասարդական սեկցիաները: Լուսավորչական և քաղլուսավոր տեղական օրգանների միջոցով, մաքսիմալ չափով, պետք է ոգտագործել ակումբային և այլ կուլտուր-կրթական աշխատանքի համար, մասնագետ և կուլտուրական օւժեր,

ամրացնելով նրանց ակումբներին կից զանազան խմբակների և սեկցիաների:

VII. Ի նկատի ունենալով այն հանգամանքը, վոր մինչև հիմա անգրագիտությունը չի վերացած միութայն անդամների միջից, ընդհանուր կուլտուր-կրթական աշխատանքներից ամենաարվածայինը պիտի համարել անգրագիտության վերացումը: Միութայնը իր միջոցներով այդ աշխատանքները չի կարող տանել և անհրաժեշտ է այդ ուղղությամբ աշխատող բոլոր օրգանների, համաժամանդ, քաղլուսավորի ամենալայն աջակցությունը:

Դպրոցական հասակ ունեցող միութայն բոլոր անդամներին պիտի լուսավորվումստի միջոցով տեղավորել դպրոցներում, իսկ հասակավորներին կուսակցական անդամների հետ, անգրագիտության վերացման խմբակներում:

VIII. Քաղ-կրթական աշխատանքները կազմում են միութայն աշխատանքների առանցքը, վորի նկատմամբ, վերջին հաշվով, ոժտեղակիչ դեր ունին կուլտուր-կրթական աշխատանքները: Քաղաքական անգրագիտության վերացման հարցը միութայն անդամների միջից՝ նույնպես ամենահարվածային աշխատանքներից մեկն է, վորպես լուրջ մարքսիստական կրթության առաջին օտախմբանը:

Այդ աշխատանքները տարվում են և հետագայում պիտի տարվեն քաղաքական անգրագիտության I-ին և II-րդ օտախմբանի դպրոցներում որոշ մշակած ծրագրով, իսկ որտեղ հնավոր չեն խմբակներում այլ ծրագրով:

Բացի քաղաքական անգրագիտության դպրոցներից, ակաիվ ընկերների, ինքնադարգացման և քաղաքական դպրոցներում ըստացած նյութերը ավելի խորացնելու և յուրացնելու համար, կազմակերպվում են մարքսիստական խմբակների վերաբերանգրագետների և թե մարքսիստական խմբակների վերաբերմամբ կուսակցությունը յուրյց պետք է տա իր ամենալայն աջակցությունը, ապով դասաւորներ և խմբակներին ամրացնելով պատասխանատու, մարքսիստական պատրաստականություն ունեցող ընկերներին, վորոնք պիտի դեկավաբեն տարվող քաղաքական աշխատանքները:

Ուշադրություն պիտի դարձվի ակաիվիստների և միութ-



X. Միության աշխատանքների կանոնադրուեցն ու ուժեղացումը անկուսակցական բանվորա-գյուղացիական յերիտասարգության մեջ, և նրանց գրավումը Սոցիալիստական Հանրապետության ընդհանուր հասարակական և շինարարական աշխատանքներին, ներկայանում է վորպես միության կոմունիստական կրթության աշխատանքներից մեկը: Աշխատանք ձեռնարկություններում, արհեստանոցներում պայքար կուսակային կլեմենտների դեմ գյուղում, աղագային և հակակոմունիստական միությունների քուրժուակական ստոր կազմակերպությունների դեմ, պայքար կառակերության դեմ, տնտեսական և գաղափարական պայքար կամանավոր ձեռնարկությանց դեմ, աջակցություն և մասնակցու-

Քյուն հստակցական և զբոժմիության աշխատանքներին. ակա-  
միության աշխատանքների մյուս կողմը, վորը պետք է բզիւնը-  
ջանց դասակարգային դիտակցութիւնը զարգացնելու համար  
անհրաժեշտ քաղաքական, տնտեսական աշխատանքների մաս-  
նակցութիւն մեջ:

XI. Ինչ վերաբերում է գյուղում տարվելիք աշխատանքներին, պետք է նկատել, զոր թե այժմս և թե գլխավորապես հետագայում, յերբ տեղի է ունենում դասակարգային շերտավորման խորացումը գյուղում, միությունը պետք է աշխատե լինել վոչ միայն կուսակցության ամենամոտ ոգնականը չքավոր գյուղացիության տնտեսական դրուժյան բարեկալման խնդրում և դասակարգային պայքարի կազմակերպողը ընդդեմ կուսակարգային ելեմենտների, այլ նա պետք է լինի ամենաառաջին հեկային ելեմենտների, այլ նա պետք է լինի ամենաառաջին իշխանության, վորովնարանը կուսակցության և խորհրդային իշխանության, վորովն հետևե նա է, վոր համախմբում է ամենաառաջագեմ, գիտակից, հեղափոխական և անցյալի հետ տրադիցիաներով չկապված տարրը:

տաբերը՝  
 Խորհրդային իշխանության ասպարիզում միության գործ-  
 նական աշխատանքը պիտի լինի ցույց տալ ամենալայն մասնակ-  
 ցություն խորհրդների ընտրության և նրանց աշխատանքներին։  
 Անցկացնել կյանքում և մասսայացնել կուսակցության և  
 Խորհրդային իշխանության բոլոր քաղաքական և տնտեսական  
 կամպանիաները։ (Սերմանման կամպանիա, պարենտուրը և այլն)։  
 Մյուս գործնական աշխատանքներից է՝ գյուղական դպրոցների  
 կանոնավորման և նյութական դրության ապահովման խնդիրը,  
 տանտնավորման և նյութական աշխատանք և ագիտացիա գյու-  
 ղացիության մեջ։

դացիութեան մէջ:  
ԲՅիշի մասնակցութունը գյուղական կոպերացիայի աշխատանքներին, այդ գյուղում տարւելիք ճհասարակական աշխատանքների վերջին ձևի», վորը վերջին հենարանն է հակահմուտ-տանքների խմբակների աշխատանքների, նույնպես կազմում է նիստական խմբակների աշխատանքներից մեկը: Նախ տանել ագրտացիա չքատալանակարգ խնդիրներից մեկը: Նախ տանել ագրտացիա չքավոր գյուղացիութեան և միջին գյուղացիութեան մէջ կոպերացիայի դադարները տարածելու համար և, յերկրորդ, արդեն ցիայի գաղափարները գյուղերում յեղած կոպերացիայի որդործական աշխատանք գյուղերում յեղած կոպերացիայի որդործական աշխատանք գյուղերում յեղած կոպերացիայի որդործական աշխատանք



մասնակցի վարչության և մյուս բոլոր ընտրություններին: Գործոն աշխատանք գյուղական փոխադարձ ոգնության կոմիտեներում, կարմիր բանակայինների չքավոր ընտանիքներին ոգնության գործում և այլն և այլն:

XII. Նյութական միջոցների սղության պատճառով Խորհրդային որգանները չեն կարողանում ուժեղացնել թե զարոցական և թե արտադրողական կուլտուր-կրթական աշխատանքները գյուղում: Անհրաժեշտ և շուտով գյուղում տարվելիք ամբողջ կուլտուր-կրթական աշխատանքները կենտրոնացնել մի կրթական կենտրոնում՝ լինի դա ժողովրդական տուն, կարմիր-տնակներ, խրճիթ-ընթերցարաններ, գրադարաններ և այլն, այն հաշվով, վոր ղեկավարող դերը խաղան կուսակցական և միության բջիջները:

Կարմիր-տնակները, խրճիթ-ընթերցարանները, գրադարանները և այլն, պետք է հիմնել թե չըջանային և թե աչքի ընկնող գյուղերում, միայն այնտեղ, վորտեղ գոյություն ունեն կուսակցական և միության բջիջներ: Պետք է մշակել մի ընդհանուր կուլտուր-կրթական աշխատանքների ծրագիր թե կուսակցական և միության բջիջների, թե քաղաքավարի և լուսբաժինների և այ որգանների համար, վորոնք զբաղված են այդ աշխատանքով գյուղում:

Հարկավոր է քննել գոյություն ունեցող կրթական հիմնարկությունները (գրադարանները, խրճիթ - ընթերցարանները և այլն) և վոչնչացնել ու փակել նրանց, վորտեղ վոչ մի աշխատանք չի ծառայում և գոյություն ունին միայն թղթի վրա և, ընդհակառակը, ամբողջ աշխատանքները կենտրոնացնել այնտեղ, վորտեղ տարվում են, և հնարավոր է այդ աշխատանքները դնել իր բարձրության վրա:

Տարվելիք կուլտուր-կրթական աշխատանքների հիմքը պիտի կազմեն գյուղատնտեսական և ընդհանուր կրթական գիտելիքների պրոպագանդան և տարածումը: (Հողային որենք, հողաշրջաբարություն, հողի կուլտուրայի մշակում, անասնապահության կանոններ, վորոգում և այլն, և այլն) յեթե միությանն հաջողվի այդ աշխատանքները տանել գյուղում, ապա նրա ազդեցությունը կուժեղանա վոչ միայն գյուղական յերիտասարդության մեջ, այլ նաև ամբողջ գյուղացիության:

Իսկ այդ աշխատանքները հնարավոր է տանել վոչ միայն տեսականորեն, այլ նաև դրժնականորեն, կազմակերպելով արտելներ, կոմունաներ, որինսակելի բանջարանոցներ և այլն: Բջիջի ուժերով մշակել անբերրի հողերը կուլտուրական միջոցներով և զրավել ու մասնակից անել այդ աշխատանքներին, նաև անկուսակցական յերիտասարդության:

Անցյալ դարնանացանի և սերմանման կամպանիայի ժամանակ այդ աշխատանքները տարվել են և տվել են իրենց արդյունքները: Այս դարնանացանի ժամանակ հարկավոր է ուժեղացնել այդ աշխատանքները, կարելի չի կազմակերպել բջիջներին կից և խրճիթ ընթերցարաններում համապատասխան խմբակներ և զբոսայցներ:

XIV. Գյուղում տարվելիք աշխատանքներից մեկն է նաև բնագիտական և այլ գիտական առարկաների տարածումը, աթի-իդմին վորոշ գիտական հիմք տալու և ավելի ևս խորացնելու և ուժեղացնելու համար: Հասկանալի չի վոր միությունը իր ուժերով թե գյուղատնտեսական առարկաներ, թե բնագիտական այսպիսի և թե ընդհանրապես վերև հիշած մյուս կուլտուր-լուսավորչական աշխատանքը չի կարող տանել և անհրաժեշտ եողտագործել քաղաքավարի, լուս-բաժինների միջոցով այդ աշխատանքների համար հենց տեղական կուլտուրական ուժերը, հանձինս գյուղական ուսուցիչների, հողաչափերի և այլն, նյութապես և բարոյապես նրանց հետաքրքրելով այդ աշխատանքներով: Ի հարկե, այդ դեպքում պետք է լինել շատ զգուշ, վորովհետև մեր գյուղական բջիջները դեռևս քաղաքականապես կազմակերպված չեն և կարող են մեզ հակառակ մանր-բուրժուական իդիոլոգիայի ազդեցության տակ ընկնել: Դրա համար անհրաժեշտ է կուսակցական և միության ղեկավարող որգանների հսկումը նրանց վրա, վորպես զի իրենց մասնագիտության սահմաններից դուրս չդան:

XV. Հակակրոնական ագիտացիայի խնդիրը նույնպես առաջնակարգ աշխատանքներից մեկն է: Այդ աշխատանքին հիմք զրվից «Կոմսոմոլի ծնունդով», վորը նպատակ ուներ հակադրել այդ կրոնական տոնին մասսայական հակակրոնական կամպանիա վորոշ կոնկրետ որինակներ վրա, ինչպես, որինակ, Դրիստոսի ծնունդը: Հակակրոնական կամպանիայի նպատակն է տոնների ընթացքում յերիտասարդությունը հեռու պահել յեկեղեցիներից:



բից և հրավիրել իր շարքերը քաջատրեկու համար այդ տոների և ընդհանրապես քրիստոնեություն կրոնի հոգիները: Առաջին փորձը, թեպետ անկողմակերպ, ավելի իր արդյունքները և ամբողջ Հայաստանում այդ կամպանիան մեծ հաջողություն ունեցավ: Պետք է աշխատել հետապնդում սույն ուղղությամբ աշխատանքները ուժեղացնել և բոլոր կրոնական մեծ տոներին հակադրել Կոմսոմոլի տոները: Բայց դրանով չպետք է բավականանալ, այլ անցնել լուրջ, սխառնատիկ հակակրոնական ագիտացիային դեմ դուրս: Պետք է հրատարակել համապատասխան գրականություն տեղական յերիտասարդության համար և այլն:

XVI. Հերթական խնդիրներից է նաև քաղաքական աշխատանքը կարմիր բանակում և գինակաշի յենթարկվող 1902—իսկ հետապնդում 1903 թվի բանվորա-գյուղացիական մասսաների մեջ: Մեր միությունը պետք է մտածի, վորպեսզի ամեն յերիտասարդ գյուղացի, նախ բան կարմիր բանակ մտնելը, պարզ գաղափար ունենա կարմիր բանակի նշանակության և հոգիյան մասին: Մենք անցկացրինք կարմիր նավատորմի յկամպանիան և տարանք վորոշ քաղաքական և գինվորական ագիտացիա: Հետևանքը յեղավ այն, վոր բանվորա-գյուղացիական լայն մասսաները յմացան ինքնադպիքի փնտրեցիայի աշխատավորության գինված ուժի նշանակության/ու նպատակները: Հարկավոր է ամբողջ աշխատանքը կապել կարմիր բանակի և նավատորմի յեղափոխական պայքարի հետ և նրա դասակարգային գիտակցությունը կրթել դրանով: Հարկավոր է այդ լուրջ աշխատանքները վորոշ սխառնատիկացիայի յենթարկել և խորացնել ու ուժեղացնել: Անհրաժեշտ է նույնպես հրատարակել համապատասխան գրականություն, վորը կաղում է մեզ մոտ:

XVII. Մամուլի և վոչ պարբերական հրատարակություն հարցը հետագա աշխատանքների մեջ նույնպես գլխավոր տեղը պետք է բռնի: Այդ աշխատանքները կաղել են չորս վոտքով նյութական միջոցների բացակայության պատճառով: Կենտկոմը կարելի է ասել, չունի որդան, դա մեր աշխատանքների ամենաթույլ կողմն է, վորը հարկավոր է զգալ և ձեռք առնել միջոցներ կանոնավոր աշխատանքներ տանելու համար: Մյուս կողմից աղաղակից փաստ է կոմունիստական գրականության բացակայությունը: Տարրական անպարզիտությունը վերացնելուց հետո, հար-

կավոր է տալ յերիտասարդ գեղացուն մի գիրք, յոր աշխատանքը շարունակելու համար. մենք այդ չունենք: Վոչ յիտյն միություն անդամները, այլ շատ ակտիվիստներ գաղափար չունեն գյուղատնտեսական, բնագիտական և այլ տարրական գիտելիքների մասին: Անհրաժեշտ է նրանց ձեռքը տալ այդ գրքերը: Ահա ինչու մի վորելիցե լուրջ կուլտուր-կրթական աշխատանքներ տանելու համար անհրաժեշտ է հրատարակել գյուղատնտեսական, գեղարվեստական, բնագիտական, հակակրոնական, մարքսիստական, և մինչև անգամ մանկավարժական գրքեր և բրոշյուրներ: Այդ ուղղությամբ մաքսիմում աշխատանք պիտի թափվի, վորովհետեւ դա է կաղմում մեր աշխատանքի հիմքը և առանց դրանց վոչ մի աշխատանք հնարավոր չէ տանել:

XVIII. Քաղլուավարի համագումարը պետք է պարզ և վորոշ գիրեկաիվներ տա քաղլուավարին և նրա տեղական որդաններին, վորպեսզի յրենց հերթական միջոցների և տեղական միջոցների մեծ մասը և յրենց տրամադրություն տակ դոնվող բոլոր կուլտուրական ուժերը և հնարավորությունները տրամադրեն և ուղղեն յերիտասարդության մեջ աարվելիք աշխատանքներին: Չանագան փոխհարաբերությունների վորոշման և հաստատման շրջանները պետք է համարել անցած: Համագումարը պետք է տա նոր լոզունգներ գեպի գործնական աշխատանքը և յրական աշակցությունը Յերիտ-միություն:

## ՔԱՂԼՈՒՍԱՆՇԽԱՏԱՆՔԸ ՄԻԼԻՑԻԱՅՈՒՄ

### ԶԵԿՈՒՑՈՒՄ Ս. ԱՍԼԻԲԵԳՅԱՆԻ

Միլիցիայի մեջ տարվող քաղլուաշխատանքը շատ կարևոր է և պատասխանատու: Թվում է թե դա այնքան պարզ է, վոր վոչ հիշեցնելու և վոչ էլ շեշտելու կարիք կա:

Դժբախտաբար յրականի մեջ այդպես չէ, վորովհետեւ դեռ վերջերս կարիք էր զգացվում այդ աշխատանքը պաշտպանելու:

Ըստ յերեուկիին, դրա պատճառն այն էր, վոր կուսակցական և յորհրդային լայն շրջանները բավականաչափ պարզ չէին պատկերացում այն խոռը նշանակությունը, վոր ստացել են հանրապետության կյանքում թե առաջին միլիցիոներները և թե բովանդակ միլիցիան:



Միլիցիան բանվորա-գյուղացիական կառավարութեան աչքն ու ախանջն է:

Միլիցիոնները ամեն ուր շփոխվելով հասարակութեան բոլոր խավերի հետ, գլխավորաբար գյուղացիական գանդվածների հետ՝ հնարավորութեամբ ունի ավելի՝ քան վորսե խորհրդային աշխատակից, ուժեղ ազդեցութեամբ անելու հասարակութեան դիտակցութեան վրա:

Միլիցիոնները խորհրդային կառավարութեան կարգադրութեանն են ու գեղեցիկները կիրառում է կյանքում. միևնույն ժամանակ նա մտահոգում է իշխանութեան հեղինակութեան մասին և մանրամասն պարզաբանումների մեջ և մտնում նրա գործողութեանն ենթակի:

Համաձայն վերոհիշյալի միլիցիոնները պետք է լինի շրջող ենցիկլոպեդիա, և վոր ամենակարևորն է, պետք է ունենա հասարակական գործչի լայն ու պարզ աշխարհայացք. դիտողական, ինքնատուրական, կազմակերպչական հատկութեաններով ոժտված և ազնիվ, կայուն, նվիրված հաստատուն աշխատավորի նման: Արդեն Գլխադրութեան կողմից «հարվածային» է ճանաչված միլիցիայի մեջտարվելիք քաղաքաշխատանքը:

Այդ տեսակետին է նաև Հ. Կ. Կ. Կ., վոր միլիցիայի մեջ տարվելիք աշխատանքը նվազ արժեքավոր չի համարում կարմիր բանակում տարվող աշխատանքից: Սակայն այդ տեսակետի վերջնական ընդունումը բոլորի կողմից վերահիշյալ ձևով դեռ չի յեղել և հուսով ենք, վոր մենք կը հասնենք մեր նպատակին, քանի վոր դա դարձնում ենք մեր հիմնական խնդիրը:

«Հեղափոխութեանը պատմութեան լուծումտիքն է», և մոտ 2 տարին հեղափոխական ժամանակի համար խոշոր շրջան է:

Ցավալի չէ, վոր այդ անագին ժամանակաշրջանում մենք չկարողացանք լիովին պատրաստել իր կոչմանը համապատասխան միլիցիոններ:

Իրա հանցանքը միլիցիայի աշխատակիցներինը չէ. դրա պատճառը պիտի վորոնել Հ. Ս. Ս. Հ.-ի կյանքի ընդհանուր պայմանների և անց ու դարձի մեջ:

Անկախ գրանից միլիցիայի վարչ.-քաղաքական որդանն ու աշխատակիցները կատարել են խոշոր ներքին գործ. Այժմ միլիցիայի քաղաքաշխատանքը կադավարված է վորոշ ձևով:

Գլխավորիցիայի վանչութեան և գավառների միլիցիայի քաղաքաշխատակիցների միջև ստեղծված է ուժեղ կապ: Շնորհիվ անընդհատ ուղարկվող հրահանգչական մատերիալի, ղեկուցման և հաշվետվութեան ճիշտ յեղանակի, տեղերի աշխատանքի փորձառութեան ուսումնասիրութեան և ոգտագործման, աշխատանքային գիտակից փոխակիցայի կիրառման, Գլխադրութեան, Լուս-ժողովմատի և Հ. Կ. Կ. Կ. մշակած քաղաքաշխատանքի հիմնական սովորների ու առանձնահատուկ մեթոդիկայի, վորոնք հարմարեցված են միլիցիայի կենցաղին ու պայմաններին, Միլիցիայի քաղաքաշխատանքը կարող է ստեղծել ձևուն ու ամուր տպարատ վարչական-քաղաքական աշխատանքի համար, վոր պետք է համերաշխ աշխատի կուսակցական և խորհրդային կազմակերպութեանների հետ ինչպես կենտրոնում, նույնպես և տեղերում:

Արդյունքն այն է, վոր վարչական որդանները ձգտում են իրենց աղբեցութեան յենթարկել ամբողջ միլիցիական մասսան: Մինչ այդ միլիցիայի քաղաքաշխատանքի համար ստեղծված պայմանները, վորոնց մեջ ընթանում էր աշխատանքը, չափազանց աննպատակային: Միլիցիայի քաղաքաշխատանքը մեծ մասամբ վոշ միայն չէր ստանում ոժանդակութեան, այլ նաև հանդիպում էր ուղղակի հակառակութեան կամ անտարբերութեան: Միլիցիայի քաղաքաշխատանքը հաջողվեց վերջապես ընդունել տալ, վոր միլիցիայի քաղաքաշխատակիցները շարունակ այլ աշխատանքների չը լծվեն: Իրան պիտի ավելացնել առհասարակ միլիցիայի աշխատանքի չափազանց դժվարութեանը:

Միլիցիան պայքարում է հանցագործութեան դեմ, հսկում է կարգապահութեանը, սանիտարական վիճակին, հանդիսանում է իրագործողը առևտրի հսկողութեան բոլոր ձեռնարկների, դան-ձողը դրամական և պարենային տուրքերի, հսկողը դատական և ազմիրիստրատիվ որդանների վորոշումների և այլն:

Միլիցիոններն են իրենց պաշտոնական պարտականութեանները կատարելիս ամբողջովին յենթակա են ընակչութեան հանցագործ տարրերի այլասեռող աղբեցութեան և մանր-բուրժուական տարրերի ու առհասարակ վերածնվող մանր-բուրժուական իդեոլոգիայի կործանարար ներգործութեան:



Համարյա յուրաքանչյուր միլիցիոներ՝ ծանրաբեռնված և ընտանիքով, զբաղված անհատական հոգսերով՝ կերակրի, զգեստի, բնակարանի և այլն և այլն: Զգային ծառայություն չերկար ժամերից հետո նա ստիպված է վերոնկել ոժանդակ աշխատանք և բոլորովին ժամանակ չունի հետաքրքրվելու և պարպելու քաղաքական և հասարակական խնդիրներով: Միլիցիայի փորձը բացասական է, ծանր, նա հանդիսանում է մի շղթա, վոր կաշկանդում է միլիցիոներին քայլերը կոնկրետ իրատական ընդունման ճանապարհին:

Բնականաբար դժվար է վարչական-քաղաքական որդանների նման պայմաններում աշխատանք տանել. ավելի դժվար է աշխատանքը անտարբերություն մթնոլորտում առանց ոժանդակության:

Շնորհիվ վերոհիշյալի, ի հարկե, ավելի գնահատելի են դառնում Գլխմիլիցիայի քաղվարչություն ձևով բերած և ապագայում բերելիք արդյունքները, ինչպիսի տեսակետ արտահայտվեց Գլխքաղլուսվարի կոլեկիայի նիստում: Պետք է հուսալ, վոր կուսակցական և խորհրդային լայն շրջանների արամադրություն ու վերաբերմունքի մեջ կատարվող փոփոխություն շնորհիվ մեր հեռագա աշխատանքն ավելի արդյունավետ կընթանա:

Բայց այդ նպատակահարմար գործոնի հետ միաժամանակ հրապարակ իջած ՆԵՊ-ը բարդացնում է ինչպես ձևն ու գոյությունը քաղլուսաշխատանքի, նույնպես և միլիցիայի վարչական քաղաքական որդանների աշխատանքն ընդհանրապես:

ՆԵՊ-ը իր փաստակար ազդեցությունն ունեցավ. միլիցիոներներին ազդեցություն վատացավ, ավելի մեծ հնարավորություն ստեղծվեց հանցագործ հակման, հենց իրենց, միլիցիոներների մեջ սկսվեց թուլացում բարոյական կայունություն:

Դրան պետք է ավելացնել բավարար կերպով պատրաստված վարչական քաղաք. աշխատանքի մեթոդների, ղեկավարների և իրազործողների պակասը միլիցիայի մեջ, քաղաքական անզբաղախություն ու անպատրաստականությունը քաղղեկավարների, գավառային միլիցիայի քաղաքային ուղնականների, դրան պուզրնաց անպատրաստականությունը քաղաքի և գավմիլիցիայի հրամկազմի ու հրամանատարների և այլն:

Թեպեա քաղաշխատանքի համար նույն իսկ լավ հրամ-

կազմից չի կարելի սպասել խոշոր ոժանդակություն, վերոմհեաև այդպիսիները իրենց ժամանակի <sup>9</sup>10-ը անց են կացնում ծառայության մեջ և ժամանակ չունեն զբաղվելու միլիցիոներներին սովորեցնելու կրթելու գործով:

Հրամկազմի անջատումը քաղաքական կյանքից փաստակար թեքումներ է ստեղծում նաև նրանց շարքերում. աշատեղից բըղխում է այն, վոր աշխատանքը չի հիմնվում ինքնագիտակցության դեպիլայինայի վրա:

Իսկ ինչ վերաբերում է քաղաշխատանքը վարելուն, պետք է շեշտել, վոր գավքաղլուսվարները դյուրությունը կարողանում էյին ոգտագործել ստացված հրահանգչական մատերիալը և արագությունը հորմարվում էյին նոր պայմաններին:

Դրություն վերոհիշյալ թերի ու համառոտ պարզաբանությունից — իր կոչման համապատասխան միլիցիոներին, նրանց կենցաղի խառնակ բացասական վիճակի, արտաքին, փաստակար ազդեցությունների մասին, — ըմբռնել կարելի չէ թե ինչքան դժվար է մշակել քաղլուսաշխատանքի մեթոդներ:

Մինչ այժմ հաստատված աշխատանքի մեթոդներից ու ձևերից, վորպես քաղվարչություն հետագա գործունեություն հիմք, պետք է ընդունել հետևյալ 2 ձևը.

1. Անհատական աշխատանք միլիցիայի մեջ և 2. մասսայական աշխատանք:

Անհատական մերձեցման մեթոդը պահանջում է կուսակցական աշխատակիցների մեծ քանակ, ժամանակ և ուժի վատնում: Բայց միլիցիոներների ծայր տատիճան ծանոթեցնումը զբաղմունքներով ու նարյազներով, անտեսական ծանր կացությունը, ընտանիքների անապահովվիճակը՝ ստեղծում են հաճախ բացարձակ անկարելիություն մասսայական քաղլուսաշխատանք վարելու միլիցիայի մեջ:

Վերոհիշյալի պատճառով, անհատական գրույցները միլիցիոներներին հեա, կամա թե՛ ակամա մնում են միակ ձևը, վոր կաբող և աալ նախնական արդյունքներ, որթնացնելով միլիցիոներների մեջ կուլտուրական և հասարակական հարցերի հետաքրքրություն: Դա պետք է հիմք ծառայի նրանց անտեսական կացությունը լավացնելու գործին (կոոպերացիա, փոխա-



դարձ ոգնութեան դանձարկոյ, աշխատանքի պաշտպանում կայն)

Այդ աշխատանքի համար անհրաժեշտ է առաջին հերթին ոգտագործել կոմբիշի անդամներին և կրթված ու քաղաքականորեն գրագետ միլիցիոներներին: Վերջապես միլիցիան կազմող միավորների քանակը սահմանափակ է (վոչ մեծ անձնական կազմ) և այժմ ամենուրեք ընդունված աշխատանքի սխառմի հետեանքով «լուրջ և յերկար» անհատական մերձեցումը լիովին բավարար է: Սակայն, ինչպես հաճախ պատահում է, աշխատանքի նույն իսկ ամենալավ ձևը, կենտրոնում իրագործված ու ծրագրված, տեղերում ալյանդակում է և քաղաքական հետեանքների հանդուս:

Այն ինչ անհատական մեթոդի մեջ, որինակ, պետք է, ավելի շատ քան ուրիշ վորեւէ ձևի մեջ, կիրառել հնարագիտութեան, ինիցիատիվ, հարմարեցված միլիցիոներին և նրա կյանքի չժանր պայմաններին: Անհատական մեթոդի կիրառման ընթացքում պետք է ընդգծել, վոր ամենանպատակահարմար կիրառումն է: կարողանալ հարուցել հետաքրքրութեան դեպի քաղաքական և հասարակական կյանքը և իր զրութեանը բարձրագոյ միջոցները:

Հասարակական և քաղաքական կյանքով հետաքրքրվող միլիցիոները կարող է լինել մի որեւէ, վորին քաղաքականները կարող են տալ ցանկացած դատարարականութեանը:

Մեթոդական տեսակետից աշխատանքները յերկրորդ խմբակը ճշգրտվորվում է 2 մասի. ա. ագիտացիոն պատահական աշխատանք և բ. սխառմատիք պրոպագանդիստական աշխատանք:

Ագիտացիոն աշխատանքների համար պետք է գործածել ավելի կենդանի ձևեր, վորոնք կարող են շահագրգռել միլիցիոներներին կուլտուր քաղաքական խնդիրներով: Այսինքն պատահական ինիցիատիվ աշխատանքներից դեպի սխառմատիք, խորը թափանցող պրոպագանդիստային աշխատանքները:

Քաղաքատուգարութեան նախընթաց փորձը թելադրում է կազմակերպել կենդանի լրագիր, դիսկուսիոններ, յերեկույթներ, «հարցեր և պատասխաններ», դեկլաշումներ, ցուցադրութեաններ՝ քաղաքատուգարութեամբ, գասախոսութեաններ և այլն:

Խորը թափանցող, սխառմատիք, պրոպագանդիստային աշխատանքը կարելի է տանել միայն ակումբների, խմբակների կամ

միլիցիական դպրոցների միջոցով: Միլիցիոներներին մեջ քաղաքատուգարութեան աշխատելու յե յեռանդ և հետաքրքրութեան առաջացնել լրագիրներով և այլն:

Բայց ինչպես անհատական, այնպես և մասնաշխատան աշխատանքը կարող է լինել կենսունակ միայն այն ժամանակ, յերբ նոքա կը կրեն պրոֆեսիոնալ բնույթ. ինքն ըստ ինքյան պարզ է, խոսելով միլիցիայի շարքերում տարվող «պրոֆեսիոնալ» ագիտացիայի և պրոպագանդի մասին, մենք ասում ենք քաղաքատուգարութեան աշխատանքների կոնկրետութեան և նրա փորձին ու միլիցիայի բազմատեսակ պաշտոնական գրութեաններին մոտենալու մասին: Բացի այդ պրոֆեսիոնալութեանը մենք ուզում ենք մատնանշել նաև առաջին հերթական խնդիրները՝ միլիցիոներների կողմից իրենց աշխատանքի գիտակցելը, ամբողջովին հասկանալը՝ իրենց դերը Խորհրդային իշխանութեան որով, մանրամասն ծանոթանալը համապատասխան պրոֆեսիոնալ միլիցիոներական ավյալներին, միլիցիոներական կառուցվածքի պարզաբանմանը ամբողջովին, ինչպես և միլիցիոներական ծառայութեան ամբողջ առանձնահատկութեաններին:

Պրոֆեսիոնալ միլիցիոներական և քաղաքատուգարութեան պետք է տարվի վոչ միայն խոսքով, այլ նաև գործով: Պրոֆեսիոնալ քաղաքատուգարութեան ուղիներն են. կազմակերպում հարկածային խմբերի ավելի պատրաստված միլիցիոներներից, կատարելու համար այս կամ այն աշխատանքը վորպես ակումբի անդամներ, ինչպես նաև ուժեղ խմբակների տեխնիկային ու միլիցիոնային կազմակերպչական աշխատանքներին վերաբերյալ հարցերը ակումբում ակտիվ քննութեան դնելու համար:

Մասնաշխատան պրոպագանդիստական աշխատանքի համար պետք է ոգտվել միլիցիոներներին պահանջում և դպրոցներում լինելուց: Մատնանշված քաղաքատուգարութեան բոլոր ձևերի նըպատակն է:

1. Միլիցիոներների գիտակցութեան մեջ արմատացնել անհրաժեշտութեանը ներքին հսկողութեան, խորհրդային իրավաւարդի, հեղափոխական նվաճումների ամբապնդումը:

2. Միլիցիոներական հետախույզ մասպանների շահագրգռումը խորհրդային շինարարութեան շահերի նկատմամբ շնորհիվ գործնական ուսումնասիրութեան նրա որեւէքների:

3. Միլիցիայի շարքերում պրոֆեսիոնալ գիտութեանների



տարածում. պայքար հանցագործության դեմ, միլիցիոները պարտականությունները իր պահակատեղում, շարժային ծառայություն, պարտականությունները պարեննուրբ ու գրամային տուգանումները դանձելիս, տեւորի և սանիտարական կացություն հսկողություն, բժշկական օգնություն, ծանոթություն տեղերի, տեղական հիմնարկների, փողոցների, տների, հասցեների և ուսումնասիրություն արտասահմանյան ու հին վտարակալությունների և այլն և այլն:

4. Միլիցիոներին դաստիարակելը սոցիալիստական քաղաքացիականության ու տնտեսության վոգով, ինչպես նաև սովորեցնել քաղաքավարություն և կորրեկտություն՝ հասարակության հետ շփվելիս դասական և ագամիստատիվ գործողությունների կիրառման, հանցագործի և վորեն արարքի մեջ կասկածվող անհատի ձերբակալման ժամանակ:

5. Միլիցիոներներին մեջ ձգտման դարգացում ինքնուրույնության և կատարելագործման հասնելու հանցագործության դեմ պայքարի մեթոդները մշակելու ժամանակ:

6. Յերկրի քաղաքա-տնտեսական դրության ըմբռնումը և նշանակությունը ինչպես կենտրոնական, նույնպես և տեղական իշխանության գործողությունների և կարգադրությունների:

Այս ստորաբաժանումից պարզ է, վոր ագամիստատ-քաղաքացիների և պրոֆեսիոնալ քաղաքաշխատանքի համար առաջադրված պահանջները իրենց հիմնական մասերում նույնանում են հանրապետության պիտակից աշխատակիցներին առաջադրված պահանջի հետ:

Այդպիսով միլիցիական քաղաքաշխատանքը դարձնելով սպեցիֆիկ պրոֆեսիոնալ, չենք փոխում նրա կոմունիստական բնույթը, այլ ավելի մոտենում ենք նրա բացիոնալ մեթոդիկային:

Քաղաքաշխատանքի մի յուրահատուկ ճյուղն է անդադրադատության և կիսադրադատության վերացումը: Այս առարկայում աշխատանքը միլիցիայի մեջ տարվում է կամ իր բանակի և պրոֆմիտության ուղինակով:

Ներկայումս միլիցիայի մեջ անդրադասների քանակը հասցված է մինիմումի և հավատացած ենք, վոր մոտ ապագայում մնացորդն էլ լիկվիդացիայի կյենթարկվի:

Կիսադրադատությունը դեռ լուրջ հանգամանք է քաղաքա-

աշխատանքի համար: Միլիցիոներների մեջ կիսադրադասները կադմուս են 60—70 տոկոս: Այդ նպատակին պիտի ծառայեցնենք մեր հզոր սեսուրները և այն ամենը, ինչ կստանանք Գլխավորության վարից ու խորհրդային հիմնարկներից: Այդ ձևի գործունեության վորպես շարունակություն են նաև մեծացնել Совпартшкол-ներն անցած միլիցիոներ կոմունիստների թիվը: Դրանց կարիքը խոշոր և և արժե խոսել այն հսկա նշանակության մասին, վոր կարող են ունենալ նրանք կուսաշխատակիցների քանակը մեծացնելու գործում: Սակայն հենց այստեղ է, վոր անհրաժեշտ է կողմնակի ոգնություն: Մեծ ոմանդակություն ցույց տվեց այդ տեսակետից Ն. Կ. Կ. Կ. իր հրահանգով, վորով մասնանշում էր անհրաժեշտությունը միլիցիայի բոլոր կոմունիստներին Совпартшкол-յով անցկացնելու: Պետք է հուսար, վոր կողմնակի ոմանդակություն ուժեղացնելու աշխատանքը կը տա այն մաքսիմումը, վոր հնարավոր է:

Հերթի է դրված նաև վոչ միայն միլիցիայի կվալիֆիկացիան ու քաղվրթյությունը, այլ նաև հրամկազմի: Դրա համար միլիցիայի վարչությունը Յերեանում հիմնել է միլիցիայի հրամարնիթացքներ:

Վերջացնելով զեկուցումս, քաղաքաշխատանքի ձևերի ու նրանց կիրառման մեթոդների պարզաբանումը տալուց հետո, անհրաժեշտ է ասել, վոր տվյալ զեկուցումը չի պարփակում բոլոր թեմաները: Դա հասկանալի է, վորովհետև եռթյան անընդհատ փոփոխությունը բղխեցնում է վոչ միայն բովանդակության փոփոխություն, այլ նաև քաղաքաշխատանքի մեթոդների:

Այժմ միլիցիայի քաղաքաշխատակիցները կարողանում են արագ յուրացնել իրենց աշխատանքի ժամանակ կալեյդոսկոպիկ իրականությունը:

Մենք տեսանք պարեննուրբի, ցանքի, սովյալների ոգնություն և այլ կամպանիաներ:

Մյուս կամպանիաներից, ուշադրով աղմին.—քաղաքացիների աշխատանքի տեսակետից, պետք է շեշտել նախապատրաստությունն ու անցկացնելը «միլիցիայի որվա», վոր հարմարեցված էր РСФСР-ի միլիցիայի գոյություն 5-ամեակին, վորը լրացված անցյալ տարվա նոյեմբեր 12-ին: Այդ առնակատարության նախապատրաստության ընթացքում հնարավոր չեղավ զարկ տալ



աղմինստ.—Քաղ. աշխատանքի բոլոր ձևերին և տալ նրան խոշոր բովանդակութիւն։ Իսկապէս. այստեղ շատ պարզ ցուցադրվեց միլիցիոներական կազմակերպութիւնը իր ամբողջութեան մեջ. դարձեց հեռաքրքրութիւն միլիցիայի նպատակների նկատմամբ, գործնականորեն ցուցադրվեց միլիցիայի և բանվորա-գյուղացիական իշխանութեան սերտ կապի պատկերը։ Միլիցիոները ստացավ իր աշխատանքի իրական զնաճատականը, հասկացավ թե ինչքան մեծ և խորհրդային իշխանութեան հոգսը իր նյութականի մասին և, վոր գլխավորն է, այդ ամենը խթան եղավ նրա մեջ զարթեցնելու սոցիալիստական քաղաքացիութեան վրդին ու պրոլետարական իդեոլոգիայի ըմբռնումը։

Իսկ պրոլետարական իդեոլոգիայի մեջ ըմբռնեց ամբողջ իմաստը վոչ միայն միլիցիական աղմինստ.—քաղաք. գործունեութեան, այլ և ամեն տեսակի։

#### Ս. Ս. ՍԻԲԵԳՅԱՆ

### Բ Ա Ն Ա 2 Ե Վ

#### ԳԼԽՔԱՂԼՈՒՍՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՔԱՂԼՈՒՍԱՇԽԱՍԱՆՔԻ ՇԵՐՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով ընկ. Դզնուհու գեկուցումը Գլխաղլուսավարի մասին քաղլուս. համագումարը վորոշում է՝

1. 2 տարվա գոյութեան ընթացքում Գլխաղլուսավարը ունեցել է եպիգոդիկ բնույթ կրող գործունեութիւն, վորը ամենքից շատ քայքայման և յենթարկվել անտեսական նոր քաղաքակա-նութեան հետեանքով պետական մատակարարումից մասսայա-կան քաղլուսնիմարկների հանման պատճառով, և միայն 22 թ. աշնան ամիսներից սկսվում է սխտեմատիկ աշխատանք։ Պարզ գիտակցելով քաղլուսաշխատանքի վերականգնման և ուժեղաց-ման ճանապարհին յեղած հսկայական գծավարութիւնները, հա-մադումարը, այնուամենայնիւ, համարում է քաղլուսնիմարկնե-րի ցանցի ուժեղացումը և խորացումը՝ հարվածային աշխատանք։

2. Լուսժողովմատը և տեղական լուսբաժինները չեն ցույց տվել անհրաժեշտ նյութական ոժանդակութիւն քաղլուսաշխա-

տանքին՝ տալով կենտրոնում Լուսժողովմատի նախահաշվի միայն 4,80% տոկոսն, իսկ գովառներում՝ ալիկի չնչին. մի շարք գովառ-ներում Շուշիսի և վոչ մի կոպեկ չունեն լուսբաժինները իրենց նախահաշվում գովաղլուսավարների համար և բռնել յեն գեպի վերջիններս լիկվիդատորական գիրք։ Բողոքելով գովաղլուսբաժին-ների այս լիկվիդատորական տրամադրութեան դեմ, համադումա-րը գտնում է, վոր մի կողմից՝ նյութական դրութիւնը, մյուս կողմից քաղլուսաշխատանքի կուսակցական բնույթը չեն տալիս հա-րավորութիւն այլ ևս քաղլուսաշխատանքը յենթարկել լուսբաժիններին, այլ գտնում է անհրաժեշտ կազմակերպչային և անտեսապէս, այլ և գաղափարական զեկավարման տեսակե-տից կենտրոնում և տեղերում քաղլուսավարները յենթարկել կու-սակցական կոմիտեներին, պահպանելով սակայն յեղած նախա-հաշվի վորոշ մասը Լուսժողովմատի բյուջեյում և տալով Գլխ-աղլուսավարի ապագարատին նոր խնդիրներին համապատասխանող ստորուկտուրա։

3. Բացի հիմնական նախահաշվներից, վոր կունենա Գլխաղլուսավարը կենտր. կոմիտեյի և Լուսժողովմատի բյուջեներում, պիտի շտապեցնել կոպեղացիայից <sup>1</sup>/<sub>2</sub> տոկոսի գանձումը և քաղ-լուսնիմարկները անտեսական որգաններին ամրացնելը։

4. Նկատի առնելով այն հանգամանքը, վոր տեղերը չունեն և վոչ մի նյութական հնարավորութիւն հասցնելու քաղլուսաշ-խատանքին անհրաժեշտ նյութական միջոցները, համադումարը գտնում է անհրաժեշտ, վոր Գլխաղլուսավարի նախահաշվի մեջ մտցվի տեղերի քաղլուսաշխատանքի ծախսերի մինիմումը, ըշ-տատները լիովին՝ և տեղերը նյութականի խնդրում ունենան գուտ լրացուցիչ և ոժանդակիչ նախահաշիւ։

5. Հաստատելով և անհրաժեշտ գտնելով Գլխաղլուսավարի ներկա ստորուկտուրան և բաժինները, համադումարը գտնում է անհրաժեշտ գովաղլուսավարների շտատները սահմանել մինչեւ 3—4 հոգի։ Միաժամանակ անհրաժեշտ է Կ. Կ.-ի համապատասխան շրջաբերականը քաղլուսավարիչներին քաղլուսաշխատանքին ամ-րացնելու հարցի նկատմամբ և գովաղլուսավարների վարիչների վոչ հաճախակի փոփոխութիւնը։

6. Նկատի առնելով Գլխաղլուսավարի և առհասարակ քաղ-լուսաշխատանքի փոփոխումը և հարմարումը ժամանակի պա-



հանջներին՝ համադրումարը հանձնարարում է Գլխադրուովարին՝ մշակել նոր ստրուկտուրա և փոխարարելություն քաղլուսնիմ-  
նարկների հետ և սյուպիսով վորոշել գավաղլուսնիմարին՝ տեղը  
ընդհանուր կուսակցական և պետական սոցիալարատի մեջ:

7. Քաղլուսնաշխատանքին հմուտ աշխատողների բացակա-  
յությունը ստիպողական պահանջ է հարուցում կենտր. կուսակ-  
ցական դպրոցում ուսնելու հատուկ քաղլուսնեկցիա և կուրսանա-  
նների 30 տոկսը արամադրել Գլխադրուովարին՝ գավառներին  
քաղլուսնաշխատողներ մատակարարելու համար:

8. Համադրումարը ընդգծում է, վոր կապը գավառների և  
կենտրոնի միջև չունի անհրաժեշտ սերտություն և հանձնարա-  
րում է Գլխադրուովարին առնել ստիպողական միջոցներ թե  
զբաղվոր և թե կենդանի կապ հաստատելու: Հրահանգիչների դա-  
վառ գործուղումը պիտի կրի պարբերական բնույթ:

9. Նկատի առնելով, վոր գեղարվեստական—թատերական  
և կինեմատոգրաֆիական գործը մանր-բուրժուական իդիոկրիայի  
զեմ պայքարելու ուժեղ զենքերից մեկն է, համադրումարը քաջա-  
լերում է Գլխադրուովարին կից հատուկ կինո վարչության ըս-  
տեղծումը, այլ և գեղարվեստական աշխատանքի կոնարողային և  
գաղափարական—մեթոդական ղեկավարության գործը ամբողջովին  
կենտրոնացնել Գլխադրուովարում և նրա տեղական մարմին-  
ներում:

10. Արտադրական սեկցիայի նյութական ուժեղացումը:

11. Համադրումարը նույնպես ընդգծելով կենտրոնացած  
աշխատանքի անհրաժեշտությունը, հրահանգում է բոլոր քաղ-  
լուսնիմարիներին ամրացնել իրենց կապը քաղլուսնիմարի հետ՝  
թե կենտրոնում և թե տեղերում՝ ըստ ամենայնի կենդանացնել  
կուլլեկիան, ուր իդեական և ղեկավար գերը պիտի խաղա քաղ-  
լուսնիմարը:

12. Համադրումարը անհրաժեշտ է գտնում ամատվա ամիս-  
ների ընթացքում հրավիրել քաղլուսնաշխատանքի զանազան կող-  
մերի վերաբերյալ խորհրդակցություններ, իսկ Գլխադրուովար-  
ների համադրումարներին առլ պարբերական բնույթ, հրավիրե-  
լով այդպիսիները ամատվա վերջը ուժեղացած աշխատանքի ըս-  
կզբին:

## Բ Ա Ն Ա Չ Ե Վ

### ԴՊՐՈՑԱ-ԴԱՍԸՆԲԱՑԱՅԻՆ ՍԳԻՏԱՅԻԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ՄԱՍԻՆ

Կանով ընկ. Սեչումյանի ղեկուցումը դպրոցա-դասնթա-  
ցային աշխատանքների դպրոցական բաժնի ապագա գործու-  
նեություն մասին, համահայկական Քաղլուսնիմարների 1-ին հա-  
մագումարը վորոշեց՝

1. Անգրադիտություն վերացման գործը մնում է արտա-  
կարգ և հարվածային:

2. Հասակավորների դպրոցներում—ինչ տիպի յեկ լինին  
նրանք—գասալանդությունը կապել՝ քաղաքներում արդյունա-  
բերություն հետ, գյուղերում՝ գյուղատնտեսություն հետ:

3. Սովորողների հասակը սահմանել 16—35 տարին:

4. Անգրադիտությունը վերացնել առաջին հերթին կազմա-  
կերպված բանվորություն մեջ, ամենատեսի կապ պահպանելով  
Պրոֆմիտության կուլտրածնի հետ:

5. Քաղաքայինը վերցնում է իր վրա իդեական ղեկավարու-  
թյունը և ապիս և մանավանդ մեթոդական հարցերում ճիշտ  
ուղղություն, ստեղծելով կոնտակտ կուսակցական կոմիտեի,  
Պրոֆմիտության, Ցերիտիտության, կինրածնի, ազգային փոք-  
րամասնությանց խորհուրդների հետ,—այս կազմակերպություն-  
ների ներկայացուցիչներից կազմած կուլլեկիայի մեջ հրավիրե-  
լով և կարծիք բանակի ներկայացուցիչը:

6. Հասակավորների դպրոցները գասավորել հետևյալ կեր-  
պով.—

1. Անգրադիտության վերացման կայաններում 3—4  
ամիս:

2. Կիսադրագեանների դպրոցներում 6 ամսվա տևողու-  
թյուն:

3. Բարձր դասի հասակավորների դպրոցներում 1, 2,  
3 տարվա տևողությամբ:

4. Կուսակցական դպրոց 1-ին աստիճանի:

5. Կուսակցական դպրոց 2-րդ »

7. Բոլոր տիպի դպրոցները շաղկապել մի ընդհանուր ուր-



գանական կապով, ամեն մի աստիճանում անցնել վորոշ ցիկլ անհրաժեշտ գիտելիքների:

8. Այբբենական և քաղաքական անգրագիտության լիկվի-դացիան տանել զուգընթացաբար:

9. Անգրագետների կայաններում այբբենական անգրագի-տության վերացումը կատարել ամերիկական մեթոդով, մասշե-ի նախագառությունների ոգնությամբ (լոգոնգների միջոցով):

10. Դասավանդությունը դպրոցներում հնարավորին չափ տանել կոմպլեկսիվ մեթոդով, առարկաները շաղկապելով իրար հետ, հիմք ընդունելով իրեն գլխավոր առարկա անտեսական աշ-խարհագրությունը:

11. Մասշեի լրագիրը ոգտագործել անգրագետ և կիսա-գրագետ, դպրոցներում իրեն դասավանդման նյութ, անտեսական և քաղաքական գրույցների համար:

12. Կազմակերպել ամառվա ընթացքում գյուղերում կիրա-կի սրերը գրույցներ և կիրակնորոյն պարագմունքներ անգրա-գետների հետ:

13. Ամառը կազմակերպել մանկավարժական դասընթացք-ներ համապատասխան ուսուցիչներ պատրաստելու նպատակով. ծրագրի մեջ առաջին տեղը հատկացնել քաղաքական գիտելիք-ներին:

14. Քաղաքական գրագիտության դասընթացքները կազմա-կերպել Գավկոմի հետ միասին գիտակից քաղաքացիներ և խորհր-դային աշխատակիցներ պատրաստելու նպատակով մանր բուր-ժուական իդեալոգիայի գեմ կովելու համար:

15. Հրատարակել համապատասխան դասագրքեր և առաջին հերթին այբբենարան. մանկավարժական ամսագրեր: Հրատարա-կությունը համարել հերթական խնդիր և համապատասխան մի-միջոցներ ձեռք առնել այդ հրատարակությունը շուտ սկսելու համար:

16. Առ այժմ «Մանկալի» միջոցով տարածել անհրաժեշտ մանկավարժական գիտելիքներ:

17. Սովորողների քանակը խմբակներում սահմանել 20-25 հոգի:

## ԲԱՆԱՅԵՎ

### ԾՐԱԳՐԱ-ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՇԵՐՔԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱ-ՍԻՆ ԱՐՎԱԾ ԶԵԿՈՒՑՄԱՆ ԱՌԹԻՎ

Հ. Ս. Խ. Հ. Գավթաղլուավարների I համագումարը գրու-նում և անհրաժեշտ

1. Քաղլուսաշխատանքը կազմակերպված հունի մեջ զնելու և պատահական անկազմակերպ վիճակին վերջ տալու նպատակով շուտափույթ կազմել ծրագրներ ու մեթոդիկաներ կուսդպրոց-ների, քաղգրագիտության դասընթացների, մարքսիստական խմ-բակների և հրամդասընթացների համար կուսակցական պատաս-խանատու և մանկավարժ ընկերների անմիջական մասնակցու-թյամբ, յուրաքանչյուր դեպքում կազմելով հատուկ հանձնաժողով-ներ: Գավթաղլուավարները պետք և տան իրենց միորձնական գիտողությունները և պատրաստի նյութը ծրագրների ու մեթոթ-ների մշակմանը հիմք ծառայեցնելու, տեղերի առանձնահատուկ պայմաններին հարմարացնելու և կատարելագործելու համար:

2. Հրահանգել բոլոր հրատարակչական մարմինների համա-հայտատանյան մասշտաբով և գավթաղլուավարների անպայման մեկական որինակ բոլոր հրատարակություններից տալ գրախո-սական յե/բ.:

3. Պարփակող ու գնահատող գրախոսականներ տալ բոլոր հրատարակությունների առթիվ: Որագրերի ու պարբերական-ների գրախոսական հոգվածացուցալը տալ այս կամ այն խնդրին նմիրված:

4. Ուղիագծել պարբերականների ու գրականության ընթացքը և մանր բուրժավական ու այլ շեղումների առաջն առնել ու ամե-նանպատակհարմար ձևով ոգտագործել յեղած հրատարակչական աննշան ֆոնդը:

5. Հրահանգել բոլոր գավթաղլուավարներին և քաղլուսիմ-նարկներին կազմակերպելու գեկավարող անհատական կամ մաս-սայական-խմբական մեթոդով ինքնազարգացման դորժը և ամեն կերպ ընդառաջել մասսաների ձգտմանը դեպի ինքնազարգա-ցում և գիտության խորացում: Միևնույն ժամանակ հաշվառ առնել ու կենտրոնացնել ամեն տեսակի ինքնազարգացման հավա-քումներն ու անհատներին:



6. Հիմնել ուժեղ գրավոր կապ ինքնազարգացման խմբակների իբար և կենտրոնի միջև ու դիսկուսիան և ռեֆերատները համահայաստանյան մասշտաբով կատարել:

7. Աշխատել համահայաստանյան ինքնազարգացման ցանցի միջոցով իրականացնել «համալսարանը կամ դպրոցը տանը» գաղափարը, քաղով հանրամատչելի դասեր ու դասախոսություններ թերթիկներին միջոցով և խորացնել ու տարածել դրական գիտություններն ու մարքսիստական մտածելակերպը:

8. Քաղլուսնիմարիկները պարձնել ինքնազարգացման ղեկավար ու ընդգրկող օրգաններ, նրանց մեջ մարքսիստական ու կոմունիստական ջիզ մտցնող ապարատներ, կազմելով ոժանդակ ձեռնարկներ, առարկայական-դրախտական ցուցակներ ակումբներ, ուղեցույցներ և այլն: Գաղլուսնավարներին կից կազմակերպել ինքնազարգացման հանձնախմբեր նման կենտրոնի հանձնախմբին, ուր պիտի մտնեն կուսակցական պատրաստված ընկերներ:

9. Խրճիթ-ընթերցարաններին, ակումբներին, ժողովրդական տան կամ գրողարանին վարիչներին հրահանգել մեքենայական գրաբաշխումից անցնել ակտիվ աշխատանքի և անկետաների, ուսումնասիրությունից ու այլ միջոցներով ճանաչել ընթերցողներին և հաճախորդներին ու անմիջականորեն ղեկավարել նրանց ինքնազարգացումը, լինել խորհրդատու ուսուցիչ այդ ասպարիզում: Այդ պատճառով պետք է ունենալ կուսակցական պատրաստված վարիչներ ու գրադարանապետներ:

10. Կազմակերպել գիտական և առարկայական դասախոսություններ, երգիչներ և դրույցներ:

11. Զարկ տալ ինքնազարգացման խմբերի ձեռնարկություն, ասպարիզ քաշել աչքի ընկնող անհատներին և նրանցից կազմել քաղլուսնիմարիկի աշխատակից սիրողների խմբեր իրենց ուժերով ձևավորելու, զարգացնելու և հարստացնելու քաղլուսնիմարիկը և անմիջականորեն ներգործոն մասնակցություն ունենալու համար կազմակերպչական աշխատանքի մեջ:

12. Արտաշխի տունը պարձնել այն կենտրոնական քաղլուսնիմարիկը, ուր պիտի սովորեն ու քաղլուսնաշխատանքի մեթոդները յուրացնեն մեր քաղլուսնաշխատակիցները: Դա պիտի լրացնի մեր քաղլուսնիմարիկի զառնիթայների բացը և փորձական ու գործնական օրինակ լինի:

13. Անհրաժեշտ է ունենալ օրգան ինքնազարգացման և գրախոսական յեթափնների գործն առաջ տանելու համար կամ առնվազն պիտի ունենալ 2-3 ամիսը մեկ անգամ հրատարակվող բյուլետեն, վորը կը պարփակի այդ ժամանակամիջոցի հրատարակությունները և ինքնազարգացման գործը, իսկ առայժմ ոգտագործել «Մաճկալ»-ի, «Ս. Հայաստ»-ի, մեկական եջերը:

## ԲԱՆԱԶԵՎ

### ԱՐՏԱԴՄՐՈՑԱԿԱՆ ԱԳԻՏԱՅԻԱՅԻ ԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԱՅԻ ՇԵՐՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Նկատի առնելով այն հանգամանքը, վոր արտադպրոցական աղիտացիան և պրոպագանդան հանդիսանում են ամենախոշոր գենք տնտեսական նոր քաղաքականության ավերիչ ազդեցություն դեմ պայքարելու գործում, համագումարը հրահանգում է կենտրոնին և անդկումին՝ համարել այս աշխատանքը հարվածային և այդ աշխատանքի բոլոր ձևերն ու մեթոդները կենտրոնացնել քաղլուսնավորում:

2. Պահպանելով քաղլուսնիմարիկների միասնական ցանցեր, պիտի ձգտել յուրաքանչյուր գյուղում ունենալ գոնե մի քաղլուսնիմարիկ, վորի շուրջ կենտրոնացնել քաղլուսնաշխատանքի պանագան ճյուղերը:

3. Գրադարանային և ակումբային կենտրոնական վարչությունների կազմակերպումը համարել անհրաժեշտ:

4. Ակումբային գործի ասպարիզում խոշոր ուշադրություն դարձնել Խրճիթ-ընթերցարաններին վրա և տալ նրանց հասարակական բնույթ և գյուղատնտեսական, բնական գիտելիքների և հակակրոնական սպիտացիայի սջաղ դարձնել: Միաժամանակ համագումարը հանձնարարում է Գլխավորվումիմարիկի համապատասխան ժողկոմատներից միջոցներ հայթայթել և հրատարակել բնագիտական, գյուղատնտեսական և բժշկական բրոշյուրային քաղլուսնավարական գրականություն:

5. Համագումարը պահում է անհրաժեշտ ունենալ Գլխավորվումիմարիկի հատուկ հրատարակություն, վորի համար հայցել կենտրոնական Կոմիտեից և ժողկոմատից հատուկ ֆոնդ:



6. Գրադարանային գործի ասպարիզում հարվածային կերպով պիտի հաղթակերպել շարժական, գրադարաններ և գրադարանը սոսկ գրադարանատ լինելուց դարձնել հասարակական և քաղաքական ազդեցության գործուն մարմին:

7. Թատերական գործը Հայաստանում գտնում և լայն կի՛րատում. անհրաժեշտ և կենտրոնից մատակարարել հեղափոխական ազդեցություն սեպերատուր և ըստ հնարավորության թատերական պիտույքներ՝ կտոր, գրված, դեկոր և այլն:

8. Ընդհանրապես գեղարվեստական ազդեցություն ասպարիզում համագումարը հրահանգում և թե կետրոնին և թե տեղերին իրենց հովանավորության և իրական դեկավարման ներքո վերցնելով գավառներում գոյություն ունեցող գրական-գեղարվեստական խմբակներն ու միությունները, կապել նրանց ակումբների հետ և տալ նրանց ժամանակակից հեղափոխական բնույթ, իսկ պրոլետարիատ ունեցող գավառներում նպաստել Հայաստանի պրոլետ-գրողների միությունը գավառային ճյուղեր ստեղծելու:

9. Ընդհանուր ազդեցության ասպարիզում քաղաքում չի տանում հատուկ ազդեցության և կամպանիաներ, այլ Կ. Կոմիտեյի անցկացրած կամպանիաներ և ազդեցություն աշխատանքը նա անց և կացնում քաղաքահայտնություն: Համագումարը հանձնարարում և Գլխավորավարի համապատասխան բաժնին մշակել այդ աշխատանքը քաղաքահայտնություն անցկացնել գործի նկատմամբ մեթոդական և գործնական ցուցմունքներ:

10. Արտադրողական ազդեցության պիտի հյուսվի դպրոցադասընթացային ազդեցության հետ:

## ԲԱՆԱԶԵՎ.

### ՄԻԼԻՑԻԱՅԻ ԲԱՂԼՈՒՍՎԱՐՁԱԿԱՆ ՇԵՐՔԱԿԱՆ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Լսելով ընկ. Ասլիբեգյանի դեկլարումը միլիցիայում տարվելիք քաղաքավորչական աշխատանքների մասին, քաղաքավորների Համահայկական առաջին համագումարը՝ ի նկատի բռնեալով միլիցիայում տարվելիք աշխատանքների բարդությունը,

միլիցիոներներին բազմակողմանի պարտականությունները, վորոնք վերջիններից պահանջում են լայն և պարզ քաղաքական ըմբռնություն, միլիցիոներների նյութական ծանր կացությունը և ռեյկտիվ բացասական ազդեցությունը, վորին յենթակա յեն միլիցիոներները ըստ պաշտոնի յուրահատուկ պայմանների— Համագումարը ընդունում և միլիցիայում տարվելիք աշխատանքների մեթոդի նկատմամբ հետևյալ վորոշումները:

1. Մասնավոր մերձեցում միլիցիոներներին:

II. Մասնակցական աշխատանքները (սկզբնական և խորացված) փոքրիկ խմբակների միջոցով:

1. Մասնավոր գրույցները միլիցիոներներին հետ պետք և ստեղծեն սկզբնական խմբումը, այսինքն արթնացնեն միլիցիոներներին մեջ ձգտում դեպի կուլտուրական և հասարակական աշխատանքները: Սույն աշխատանքներին ձեռքը միաժամանակ պետք և ձեռնարկն ինքնագործունեության ընթացքը, վորը պետք և արտահայտվի միլիցիոներների նյութական բարեկաման աշխատանքների միջոցին (կոոպերացիա և այլն):

2. Մասնաշակառ աշխատանքները հարկավոր և տանել յերկու ուղիով

ա) վոչ խորացած աշխատանք-ազդեցության:

6) սիստեմատիկ խորացած պրոպագանդա:

3. Ազդեցության համար Համագումարը ընդունում և նորագույն ձեռք (կենդանի լրագիր, քաղաքական դատեր, հարց ու պատասխանի յիրևիկներ և այլն):

4. Պրոպագանդայի խորացված աշխատանքները կատարել ակումբների խմբակներին միջոցով և միլիցիայի դպրոցներում:

5. Հիշված աշխատանքների իրագործման համար, վորպես ոժանդակիչ մարմիններ ընդունել հրահանգչական գործը գրադարանային և այլն:

6. Վորպեսպի առաջարկված ձեռքը կենտունակ լինեն, ապա հարկավոր և այդ աշխատանքների ձեռքին տալ նաև պրոֆեսիոնալ բնույթ: Աշխատանքները պետք և տարվեն այս ուղղությամբ հարվածային կերպով ավելի պատրաստված միլիցիոներներին հետ, կազմակերպելով նրանցից մի ուժեղ խմբակ, վորը ընդունակ լինի ակալով մասնակցություն ցույց տալու այս կամ այն հարցի քննություն ժամանակ—միլիցիայի կյանքից:



7. Այբուբենական անգրագիտության և կիսագրագիտության վերջնական վերացման համար ընդունել այն մեթոդը, Վորը տարվել և մինչև որ և վորը գործադրվում և կարմիր բանակում թե Պրոֆմիության շարքերում:

8. Համադուսարը անհրաժեշտ և համարում խորհրդային կուսակցական դպրոցներում միլիցիոններ-ունկնդիրներին թիմն ավելացնել զգալի հափով:

9. Հրամկազմի քաղաքական և մտավոր մակարդակը բարձրացնելու համար, հարկավոր և այդ վերջիններին պարբերաբար փոխադրել հրամկազմի դպրոցը:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|                                                    | Երես |
|----------------------------------------------------|------|
| 1. Քաղլուստրի գործունեությունը և մոտակա խնդիրները. | 5.   |
| 2. Դպրոց. դասընթաց և ագիտ-պրոպ.                    | 22.  |
| 3. Ծրագրա-դրախտական աշխատանք.                      | 27.  |
| 4. Քաղլուստ. աշխ. պրոֆմիության մեջ.                | 36.  |
| 5. Յերիտմիության քաղլուստ. աշխատանքները.           | 42.  |
| 6. Քաղլ. աշխատանքը միլիցիայում.                    | 51.  |
| 7. Բանաձևեր. (2).                                  | 60.  |



50

ՀՀ Ազգային գրադարան



NL0863987



26 91

11  
24347